«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԱՐԹԻԿԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 13

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 13

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 13

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 16

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 16

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 18

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 21

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 26

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 34

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 38

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 43

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 47

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 51

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 54

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 56

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ 60

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 62

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 65

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 66

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 67

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 68

ՆԱԽԱԲԱՆ

«Արթիկի պետական քոլեջ» ՊՈԱԿ–ի (այսուհետ՝ ԱՊՔ, ՄՈՒՀ կամ Քոլեջ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումին համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգվում և իրականացվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ. -ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959- Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը ֆինանսավորվել է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (այսուհետ՝ ԿԳՄՍ) նախարարության կողմից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Առանձնահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա:

Զեկույցը պարունակում է ԱՊՔ–ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Փորձաքննությունն իրականցրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N 959-Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Փորձագիտական գնահատում իրականացնելիս խումբը հաշվի է առել, որ Արթիկի պետական քոլեջի տեսլականն ու առաքելությունն է «գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումը կրթության պետական ռազմավարության շրջանակներում: Քոլեջը, օգտագործելով մարդկային և նյութական ողջ ներուժն ու կարողությունները, ձգտում է բավարարել աշխատաշուկայի պահանջները՝ պատրաստելով որակյալ մասնագետներ: Այն հանդես է գալիս որպես առաջավոր տեխնոլոգիաներ տարածող, ուսանողակենտրոն կրթական միջավայր ու կրթության մատչելիություն ապահովող հաստատություն»: Քոլեջը, տվյալ տարածաշրջանում ունենալով կրթական և սոցիալական ռազմավարական նշանակություն, իրականացնում է կրթական ծրագրեր, որոնք կարևոր դերակատարություն ունեն Արթիկ քաղաքի և հարակից գյուղերի զարգացման համար:

ԱՊՔ-ի սահմանած ռազմավարական նպատակները բխում են քոլեջի ներքին և արտաքին շահակիցների կարիքներից, այդ նպատակների իրականացումն ամբողջությամբ միտված են իրականացվող կրթական գործընթացների բարելավմանը: Փորձագիտական խումբը շեշտադրում է, որ շահակիցների ներգրավման և նրանց կարիքների բացահայտման համար առկա չեն հստակ սահմանված մեխանիզմներ: Քոլեջի համար տվյալների հավաքագրման մեխանիզմների ներդրումը հրատապ է, քանի որ միայն այդ պարագայում է հնարավոր իրականացնել ուղղորդված և տվյալահենք կառավարում: Ներկա փուլում որոշումների կայացման գործընթացները կարելի է դիտարկել առավել իրավիճակային, որը թեև թույլ է տալիս խնդիրների լուծման տեսանկյունից տվյալ պահի համար շահեկան լուծումներ գտնել, սակայն տեսանելի չի դարձնում քոլեջի առավել հեռահար նպատակներին հասնելու ճանապարհային քարտեզը, որոնք միտված կլինեն քոլեջի գործընթացների շարունակական բարելավմանը: ԶԾ-ում սահմանված նպատակների իրականացման համար ներդրված չեն արդյունքների գնահատման ցուցիչներ, ապահովված չէ պլանավորում և իրականացում կապը, բոլոր գործընթացների հիմնական պատասխանատուն և կատարողը տնօրենն է, պլանավորված չէ նպատակների ձեռք բերման համար անհրաժեշտ ռեսուրսներ և ժամկետներ, որը կարող է վտանգել իրականացվող բարելավումների շարունակականությունը:

Փորձագիտական խմբի համար տեսանելի են կառավարման համակարգի բերելավման ուղղությամբ քոլեջի ղեկավար անձնակազմի քայլերը, փորձ է արվել հստակեցնել կառավարման ուղղահայաց և հորիզոնական կապերը, տարանջատել և կանոնակարգել աշխատակիցների և խորհուրդների գործառույթները: Փաստաթղթային հենքը ստեղծված է, սակայն դրանք դեռևս ամբողջությամբ տեղայնացված չեն, քոլեջում իրականցվող գործընթացները որոշակիորեն

կտրված են փաստաթղթերում ներկայացված իրականությունից: Ինչ վերաբերում է ֆինանսական միջոցների կառավարմանը, ապա պետք է նշել, որ բյուջեն ձևավորվում է միայն պետական պատվերով ուսանողների վարձավճարներից, վճարովի ուսուցման համակարգի ուսանողների թիվը փոքր է, մշտապես առկա են թափուր տեղեր, որը պայմանավորված է տեղի բնակչության համեմատաբար ցածր վճարունակությամբ: Բյուջեի ծախսերը հիմնականում բաժին է ընկնում աշխատավարձերին, կոմունալ վճարներին և որոշակի վերանորոգման աշխատանքներին, քոլեջի համար ֆինանսական ռեսուրսների դիվերսիֆիկացիան այս պահին հրատապ խնդիր է, որը հնարավորություն կընձեռի քոլեջին պլանավորելու զարգացման ընթացքը, ապահովելու ՄԿԾ -ների իրականացման համար անհրաժեշտ պայմաններ և նպաստել դասախոսական կազմի մասնագիտական առաջընթացին:

ԱՊՔ-ում ողջունելի է այն, որ ղեկավար անձնակազմը բաց է փոփոխությունների համար, ընդունում է սոցիալական գործընկերների աջակցությունը և փորձում է գտնել նոր համախոհներ, կարևոր է ընդգծել, որ այս ամենը վերջին տարիներին հանգեցրել են քոլեջի ռեսուրսների որոշակի բարելավմանը: Ղեկավար անձնակազմի վարած քաղաքականությունը, իհարկե, ապահովում է որոշ դրական տեղաշարժեր, սակայն փորձագիտական խումբը կարևորում է կառավարչական հստակ և ուղղորդված մեխանիզմների ներդրումը, որը կպայմանավորի քոլեջի հաջողությունը ոչ միայն անձերով և իրավիճակներով, այլ՝ ներդրված կուռ կառավարման համակարգով:

Քոլեջի զարգացման ծրագրում որակի ապահովումը և որակյալ կրթությունը դիտարկվում են առաջնահերթություններ, սակայն որակի ապահովման գործընթացները դեռևս հիմք չեն ծառայում կրթական և այլ գործընթացների բարելավման համար: ԱՊՔ-ում գրեթե բացակայում են տվյալների հավաքագրման և վերլուծման համակարգային մեխանիզմները. առկա չէ հստակ մեթոդաբանություն, որի մասին փաստում է նաև այն, որ թե՛ ՄԿԾ-ների բարելավման, թե՛ որոշումների կայացման գործընթացների հիմքերում ընկած չեն օբյեկտիվ տվյալները ամփոփող վերլուծություններ: Փորձագիտական խումբը լիահույս է, որ քոլեջի կողմից իրականացված ինքնավերլուծությունը և փորձագիտական զեկույցը հիմք կհանդիսանան քոլեջում որակի ապահովման համակարգի ներդրման և որակի մշակույթի տարածման համար:

ԱՊՔ-ն իրականացնում է 8 միջին մասնագիտական կրթական ծրագիր՝ «Հաշվապահական հաշվառում», «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ», «Փոխադրումների կազմակերպումը և կառավարումը տրանսպորտում», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա», «Նախադպրոցական կրթություն», «Իրավագիտություն», «Դիզայն»: Հատկանշական է, որ «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» կրթական ծրագիրը 2022թ. իրականացվում է աշխատանքի վրա հիմնված ուսուցման (ԱՀՈՒ) ձևաչափով, քոլեջը փորձել է ուսումնական պլանը համապատասխանեցնել այդ ձևաչափին, սակայն փորձագիտական խումբը նշում է, որ վերանայման գործընթացներն իրականացվել են ոչ տվյալ մասնագիտությանը տիրապետող մասնագետների կողմից, գործընթացին չեն մասնակցել գործատուները, այդ իսկ պատճառով առկա են որոշ անհամապատասխանություններ պլանավորման և իրականացման միջև: Մյուս կողմից առկա չեն ՄԿԾ մշտադիտարկման հստակ մեխանիզմներ, գործընթացին կանոնակարգված ձևով չեն մասնակցում աշխատաշուկայի ներկայացուցիչները, ոլորտի այլ մասնագետները, ինչպես նաև

չեն հավաքագրվում համակարգված տվյալներ ծրագրի արդյունավետության վերաբերյալ, վերջինները ռիսկային են դարձնում ՄԿԾ-ների լիարժեք իրականացումը։

Ինչ վերաբերում է դասախոսական կազմին, ապա դրական է, որ վերջին տարիներին քոլեջը կարևորում է պրակտիկ մասնագետների ներգրավումը, այդ ուղղությամբ իրականացվում են որոշ քայլեր։ Փորձագիտական խումբը նշում է, որ անհրաժեշտ է առավել ինտենսիվորեն իրականացնել պրակտիկ ոլորտից մասնագետների ներգրավման աշխատանքներն, որը կնպաստի ՄԿԾ-ի բարելավմանը և ուսանողների գործնական կարողությունների զարգացմանը։ Մտահոգիչ է, որ տարածաշրջանով պայմանավորված, քոլեջում առկա են դասախոսների հոսունության դեպքեր, որը հանգեցրել է նաև երիտասարդ դասախոսական կազմի մեծաքանակ ընդունմանը (շուրջ 21 դասախոս), փորձագիտական խումբն իր ուշադրությունն է հրավիրում այս հանգամանքին՝ կարևորելով մենթորության գործընթացների կանոնակարգումը։

Քոլեջն ունի համապատասխան տարածքներ, մասնագիտական կաբինետներ, կարի նորաստեղծ լաբորատորիաներ, համակարգչային լսարաններ, փորձագիտական խումբը գովելի է համարում ռեսուրսների բարելավման և դրանց թարմացման ուղղությամբ քոլեջի ներդրած ջանքերը։ Ռեսուրսների բարելավման տեսանկյունից՝ ներկա փուլում քոլեջի համար առաջնահերթ է «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» ՄԿԾ-ի իրականացման համար մարզադահլիճի հիմնանորոգումը և լոկալ ջեռուցմամբ ապահովելը։ Ռեսուրսների ձեռքբերման տեսանկյունից փորձագիտական խումբը քոլեջի համար առաջնային է համարում գործընկերների հետ համատեղ գույքի օգտագործման քաղաքականության մշակումն ու իրականացումը, որը կնպաստի նաև կրթական ծրագրերի իրականացման համար առավել ժամանակակից ռեսուրսների օգտագործմանը։

Քոլեջը հետազոտության իրականացումը որպես առաջնահերթություն չի դիտարկում՝ իրեն չհամարելով հետազոտական ուսումնական հաստատություն։ ԱՊՔ-ում ուսանողների ստեղծագործական, վերլուծական կարողությունների և հմտությունների շարունակական զարգացմանը նպաստող և հետազոտական աշխատանքները խրախուսող մեխանիզմներ գրեթե ներդրված չեն։ Այսուհանդերձ, քոլեջում ուսանողների կողմից իրականացվում են հետազոտական տարբեր պարունակող որոշ աշխատանքներ, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ հետազոտության ոլորտում դասախոսների և ուսանողների փորձի պակասը բացասաբար է անդրադառնում այդ աշխատանքների բովանդակային և որակական կողմի վրա, արդյունքում կարող է վտանգվել ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի լիարժեք ապահովումը։

Ուսանողներն ընդհանուր առմամբ բավարարված են ԱՊՔ–ի տրամադրած կրթական միջավայրից։ Քոլեջում ձևավորված է դրական բարոյահոգեբանական մթնոլորտ, որը բարձր է գնահատվում ուսանողների կողմից, այնուամենայնիվ, քոլեջում նկատվում է ուսանողների կարիքների բացահայտման մեխանիզմների ներդրման անհրաժեշտությունը։ Ինչ վերաբերում է ուսանողների կարիերային, ապա դրական է, որ այս ուղղությամբ իրականացվող քայլերը նպաստել են վերջին տարիներին շրջանավարտների զբաղվածության տոկոսային հարաբերակցության բարելավմանը, այդուհանդերձ փորձագիտական խումբը նշում է, որ ուսանողների կարիերային նպաստող ծառայությունները հստակ կանոնակարգման և բարելավման կարիք ունեն։

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԱՊՔ-ն ունի որոշակիորեն ձևավորված արտաքին և ներքին հաշվետվողականության համակարգ, այդուհանդերձ խումբը նշում է, որ մի կողմից ներքին հաշվետվողականության գործընթացները բխեցված չեն ԶԾ նպատակներից, մյուս կողմից տարբեր ստորաբաժանումների հաշվետվություններում բացակայում է վերլուծական բաղադրիչը, որն իր հերթին թույլ չի տալիս գնահատել գործընթացների իրականացման քանակական և որակական կողմերը, այս ամենը կարող է խոչընդոտել քոլեջի ՌԾ-ի նպատակների ամբողջական իրականացումը:

Փորձագիտական խումբը գովելի է համարում, որ քոլեջն ունի գործընկերային համագործակցության շրջանակ, նաև այն, որ ԱՊՔ-ի ղեկավար անձնակազմը շահագրգիռ է ներգրավելու նոր սոցիալական գործընկերներ և գործատուներ: Վերջին տարիներին քոլեջի ունեցած առաջընթացի մեջ իրենց կարևոր դերակատարումն ունեն սոցիալական գործընկերները, ուստի ԱՊՔ-ն անուղղակիորեն (արտաքին կապերի զարգացումը ԶԾ նպատակ չէ) իր զարգացումը ամբողջովին կապում է գործընկերների հետ և սկսել է ակտիվ համագործակցություն: Այս տեսանկյունից խումբը նշում է, որ կարևոր է գործընկերների հետ հաղորդակցվել տարբեր մակարդակներով՝ թե ՄԿԾ-ների բարելավման, թե ռեսուրսների զարգացման, և թե կրթական միջավայրի բազմազանեցման նպատակով:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1. Կարևոր սոցիալ-տնտեսական դերակատարությունը Արթիկ քաղաքի և հարակից գյուղերի համար աշխատաշուկայում անհրաժեշտ միջին մասնագիտական որակավորմամբ մասնագետների պատրաստման տեսանկյունից,
2. Քոլեջի հանրույթի և տնօրենի բաց լինելը քոլեջի զարգացմանը միտված հնարավորությունների իրացման համար,
3. Քոլեջի ունեցած մասնագիտությունների պահանջարկը տարածաշրջանում,
4. Ուսանողների հավաքագրման գործող մեխանիզմները, որոնք նպաստել են ուսանողների թվաքանակի աճին,
5. Դասախոսական կազմի ներուժը,
6. Ակտիվ համագործակցությունը տեղի գործատուների և սոցիալական գործընկերների հետ,
7. Ռեսուրսային բազայի համալրումը և դրանց հասանելիությունը ուսանողներին և դասախոսներին,
8. Ներդրված ներքին և արտաքին հաշվետվողականության համակարգը,
9. Կարճաժամկետ կրթական ծրագրեր իրականացնելու քոլեջի փորձառությունը:

Հաստատության թույլ կողմերն են.

1. ԶԾ-ի պլանավորման և իրականացման անկատար մեխանիզմները, արդյունքների գնահատման հստակ ցուցանիշների բացակայությունը,
2. Կառավարման ուղղահայաց և հորիզոնական կապերի ոչ համակարգված լինելը,
3. Կառավարման ՊԻԳԲ շրջափուլի խիստ հատվածային իրականացումը,
4. ՄԿԾ-ների վերջնարդյունքների բացակայությունը,

5. ՄԿԾ-ների կառավարման և վերահսկման ոչ կանոնակարգված լինելը,
6. Ուսանողներին վերլուծական, քննադատական և հետազոտական կարողությունները զարգացնող առաջադրանքների տրամադրման ոչ ինստիտուցիոնալ բնույթը,
7. Դասախոսական կազմի մասնագիտական վերապատրաստումների պակասը,
8. Ուսումնառության և հետազոտության փոխկապակցված չլինելը,
9. «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» ՄԿԾ-ի համար համապատասխան ռեսուսրների անկատարությունը, լոկալ ջեռուցման բացակայությունը,
10. Որակի ապահովման համակարգի ներդրման փուլում լինելը և տվյալների հավաքագրման մեխանիզմների բացակայությունը:

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1. Վերանայել Զարգացման ծրագրի պլան-ժամանակացույցը, որտեղ արտահայտված կլինեն նպատակներից բխող խնդիրները, խնդիրների լուծման համար անհրաժեշտ քայլերը, դրանց կատարման համար նախատեսված ժամկետները, կատարման համար անհրաժեշտ ռեսուրսները, պատասխանատուները և ակնկալվող արդյունքի գնահատման ցուցանիշները:
2. Մշակել և ներդնել ռազմավարական պլանի իրագործումը մշտադիտարկող մեխանիզմներ, որոնք թույլ կտան գնահատել գործողությունների կատարման աստիճանը և ռազմավարական նպատակների իրագործման առաջընթացը:

Կառավարումն ու վարչարարությունը

3. Վերանայել քոլեջի կառուցվածքային գծապատկերը և պաշտոնի անձնագրերը՝ հստակեցնելով և համապատասխանեցնելով միմյանց և քոլեջում իրականացվող գործընթացներին:
4. Հստակեցնել քոլեջում գործող խորհուրդների գործառույթները և կառավարման գործընթացները կազմակերպել սահմանված կանոնակարգերին համապատասխան՝ ապահովելով որոշումների կայացման հիերարխիկ կապերը:
5. Համահնչեցնել ստորաբաժանումների կարճաժամկետ պլանները քոլեջի զարգացման ծրագրին՝ ապահովելով պլաններում հստակ գործողություններ, ժամկետներ, պատասխանատուներ, ռեսուրսներ, արդյունքներ:
6. Ներդնել և լիարժեք գործարկել կառավարման ՊԻԳԲ շրջափուլը՝ մշակելով տվյալների հավաքագրման և վերլուծման համապատասխան գործիքակազմ՝ հիմքեր ստեղծելով տվյալահենք որոշումների կայացման համար:
7. Վերանայել ամբիոնները և դրանցում ընդգրկված մասնագիտությունները՝ կիրառության մեջ դնելով ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնող մասնագետի պահանջները:

Մասնագիտության կրթական ծրագրերը

8. Մշակել և ներդնել մասնագիտական կրթական ծրագրերի ամբողջական մասնագրեր՝ տեղայնացնելով ՊԿՉ-ն, մշակելով կրթական ծրագրի վերջնարդյունքները, դրանք փոխկապակցելով մոդուլային ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին:
9. Մշակել և ներդնել դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն՝ ապահովելով դասավանդման և ուսումնառության մեթոդների, ինչպես նաև ուսանողներին տրվող առաջադրանքների փոխկապակցվածությունը և համապատասխանությունն ուսումնառության ակնկալվող արդյունքներին:
10. Մշակել և ներդնել գնահատման հստակ չափանիշներ, որոնք տեսանելի կդարձնեն ՄԿԾ վերջնարդյունքներին համապատասխան մոդուլների ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռքբերումը՝ բարձրացնելով գնահատման գործընթացի թափանցիկությունն և արժանահավատությունը:
11. Վերանայել ուսումնական պլանները՝ հստակեցնելով և համապատասխանեցնելով տվյալ ՄԿԾ-ի համար սահմանված ընտրովի առարկաները, պահուստային և նախասիրական ժամերը ըստ աշխատաշուկայի կարիքների՝ նպաստելով շրջանավարտի կարիերային:
12. Մշակել ՄԿԾ-ի մշտադիտարկման համակարգային մեխանիզմներ, որոնք հնարավորություն կընձեռեն դուրս բերելու ՄԿԾ ընթացիկ խնդիրները և բարելավելու դրանք:
13. Բարելավել ՄԿԾ-ները՝ իրականացնելով համեմատական վերլուծություններ (բենչմարքինգ) տեղական և միջազգային նմանատիպ ուսումնական հաստատությունների հետ՝ բացահայտելով և տեղայնացնելով այլ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում եղած լավագույն փորձը:
14. Մշակել և ներդնել անհատական, կուրսային և դիպլոմային աշխատանքների կատարման ընթացակարգեր՝ փոխկապակցելով ակադեմիական ազնվության կարգի հետ, ապահովելով աշխատանքների կատարման հետազոտական և վերլուծական կարողությունների ձևավորման բաղադրիչը, սահմանելով վերոնշյալ աշխատանքների գնահատման հստակ չափանիշներ:

Ուսանողները

15. Հստակեցնել ուսանողների կարիերային միտված աշխատանքները՝ սահմանելով գործողություններ, ժամկետներ, ակնկալվող արդյունքներ:
16. Կանոնակարգել շրջանավարտների բազան՝ հստակ տարանջատելով շրջանավարտների ավարտելու տարիները, կարգավիճակը, նրանց հետ հետադարձ կապ ապահովելու տվյալները և այլն:
17. Բացահայտել ուսանողների կարիքները և ներդնել լրացուցիչ պարապմունքներ:
18. Ներդնել ուսանողներին տրամադրվող կրթական, խորհրդատվական ծառայությունների արդյունավետության գնահատման մեխանիզմներ՝ վերլուծելով աշխատանքների արդյունավետությունը:

19. Ներդնել ՄԿԾ-ների շրջանակում հետազոտական կարողություններ զարգացնող առաջադրանքներ՝ ապահովելով ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի պահանջները։

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

20. Առավել պլանավորված քայլեր ձեռնարկել պրակտիկ դասավանդողների ներգրավման ուղղությամբ՝ նպաստելով ուսանողների գործնական կարողությունների զարգացմանը։
21. Մշակել և ներդնել մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի հարցաշարերի և հարցատոմսերի կազմման հստակ ընթացակարգ։
22. Կանոնակարգել և ապահովել դասախոսների աշխատանքի արդյունավետության գնահատման համակարգային մեթոդաբանություն՝ կիրառելով բոլոր եղած մեխանիզմները մեկ միասնության մեջ՝ ապահովելով դրանցում վերլուծական բաղադրիչը։
23. Ապահովել դասախոսական կազմի համար մասնագիտական վերապատրաստումների գործուն մեխանիզմներ՝ անհրաժեշտության պարագայում ներգրավելով այդ գործում գործատուներին և սոցիալական գործընկերներին։

Հետազոտությունը և զարգացումը

24. Ներդնել քոլեջի առանձնահատկություններից բխող հստակ հետազոտական քաղաքականություն՝ հիմքում ունենալով նորարարությունների որդեգրումը և տարածումը։
25. Մշակել և ներդնել հետազոտական աշխատանք իրականացնելու ուղեցույց, որտեղ ներկայացված կլինեն հետազոտական աշխատանք ներկայացնելու հստակ կառուցվածք, պահանջներ, գնահատման չափանիշներ։
26. Ներդնել դասախոսական կազմի հետազոտական աշխատանք իրականացնելու խրախուսման մեխանիզմներ՝ ապահովելով միջազգային փորձի ուսումնասիրումը և նորարարական գաղափարների ներմուծումը։
27. Մշակել և բազմազանեցնել ուսանողներին ներկայացվող վերլուծական, քննադատական, հետազոտական կարողություններ ձևավորող հանձնարարականներ։

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

28. Մշակել և ներդնել ֆինանսների դիվերսիֆիկացման մեխանիզմեր՝ եկամտի կայուն աճ ապահովելու և ԶԾ նպատակների լիարժեք իրականացումն ապահովելու համար։
29. Բարելավել գրադարանային ենթակառուցվածքը՝ համալրելով մասնագիտական, ոչ մասնագիտական, արդիական և թվայնացված գրականություն, ինչպես նաև կայքէջում ունենալ էլեկտրոնային գրադարան։
30. Շարունակաբար դրսևորել նախաձեռնողականություն ենթակառուցվածքների և ռեսուրսների բարելավման և արդիականացման համար, մասնավորապես

մարզադահլիճի հիմնանորոգման և լոկալ ջեռուցման համակարգի կառուցման գործում:

31. Մշակել գործիքակազմ և իրականացնել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների արդյունավետության գնահատում:

Հասարակական պատասխանատվություն

32. Ներդնել ստորաբաժանումների հաշվետվությունների ներկայացման միասնական ձևաչափ՝ ապահովելով հաշվետվությունների վերլուծականությունը և կապը պլանավորման հետ:
33. Քոլեջի տարեկան հաշվետվությունները բխեցնել Զարգացման ծրագրի նպատակներից՝ ապահովելով վերջիններիս գնահատումը:
34. Գործարկել կայքէջի օտարալեզու բաժինները՝ աշխատանքներում ներգրավելով ներքին ռեսուրսները:
35. Մշակել և ներդնել հասարակությանը գիտելիքներ փոխանցելու մեխանիզմներ՝ անհրաժեշտության պարագայում ներգրավելով գործատուների, ուսանողների, դասախոսների և այլ սոցիալական գործընկերների:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

36. Ներդնել արտաքին կապերի զարգացման քաղաքականություն՝ ապահովելով նաև հստակ պլանավորված գործընթացներ, նախանշելով ակնկալվող արդյունքները:
37. Նախաձեռնել նոր գործընկերներ գտնելու գործընթացներ, որոնք կնպաստեն նոր ծրագրերի իրականացմանը և ֆինանսական հավելյալ միջոցների ներգրավմանը:
38. Զարգացնել գործընկերային կապերը միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ՝ ունենալով հստակ նպատակներ դասախոսների փորձի փոխանակման, կրթական ծրագրերի բարելավման և այլնի ուղղությամբ:
39. Բարելավել դասախոսական և ուսանողական կազմերի օտար լեզվի (մասնավորապես՝ անգլերեն լեզվի) իմացության մակարդակը:

Որակի ներքին ապահովման համակարգը

40. Հստակեցնել որակի ապահովման գործընթացների վերաբերյալ քոլեջի տեսլականը և մշակել մեխանիզմներ որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցներն ներգրավելու ուղղությամբ:
41. Մշակել և ներդնել որակի ներքին ապահովման կենտրոնի աշխատանքային պլան՝ քննարկելով և հստակեցնելով քոլեջի առաջնահերթությունները, սահմանելով հստակ ժամկետներ, կատարողներ և աշխատանքների արդյունավետությունը գնահատող ցուցիչներ:

42. Մշակել և ներդնել քոլեջի կարիքներին և առանձնահատկություններին համապատասխան տվյալների հավաքագրման, մշակման և վերլուծման գործիքակազմ:
43. Ապահովել որակի ապահովման պատասխանատուի մասնագիտական աճը որակի ապահովման ոլորտում՝ նպաստելով սահմանված աշխատանքների լիարժեք իրականացմանը:

_____

Ասյա Սիմոնյան
Փորձագիտական խմբի ղեկավար

03.08.2023թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Արթիկի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. **Ասյա Սիմոնյան՝** մանկավարժական գիտությունների թեկնածու, Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի Սպորտի և արվեստի ամբիոնի դասախոս, Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոցի (ԳՄԲՎԴ) գեղարվեստական մարմնամարզության մարզիչ, միջազգային կարգի մրցավար,
2. **Մարինե Գալուբյան՝** Սանարե-Ֆարմ ՍՊԸ-ի հաշվապահ, Արտաշատի №3 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի անդամ,
3. **Օլյա Ավետիսյան՝** Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջի «Հագուստի մոդելավորում և նախագծում» կրթական ծրագրի մասնագիտական մոդուլների դասախոս,
4. **Ռոբերտ Գրիգորյան՝** Հայաստանում ֆրանսիական քոլեջի «Հաշվողական տեխնիկա և ավտոմատացված համակարգեր» կրթական ծրագրի 3-րդ կուրսի ուսանող:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային բաժնի մասնագետ Անահիտ Տերտերյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները և այդ թվում համակարգողը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

ԱՊՔ-ն պետական ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար 13.01. 2023թ. ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո (17.04.2023թ.) ԱՊՔ–ի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր: Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծություն

Հաշվի առնելով ուսումնական հաստատության՝ առաջին անգամ ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու հանգամանքը և քոլեջներում որակի ապահովման մշակույթի ձևավորման սկզբնական փուլում լինելը՝ ՈԱԱԿ–ը հունվար ամսին 4-օրյա առցանց աշխատաժողովներ է իրականացրել ԱՊՔ-ի հետ: Աշխատաժողովների ընթացքում ներկայացվել են ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների մեկնաբանությունները ՄԿՈՒ հաստատությունների համար, ինստիտուցիոնալ հավատարմագրման հարցաշարը, ինքնավերլուծության ձևաչափը, SWOT վերլուծության իրականացման սկզբունքները և այլն: Քոլեջն իրականացրել է նաև SWOT վերլուծություն

Ենթակառուցվածք և ռեսուրսներ չափանիշի շրջանակներում, որը դիտարկվել է ՈԱԱԿ-ի աշխատակիցների կողմից՝ քոլեջին որոշակի ուղղորդում տրամադրելու նպատակով: Քոլեջին ընթացիկ աջակցություն տրամադրելու և ընթացիկ հարցերին պատասխանելու նպատակով կազմակերպվել է նաև միջանկյալ հանդիպում 1 մարտի 2023թ.:

ԱՊՔԻ-ի ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը ներկայացվել է 13.04.2023թ.: Ինքնավերլուծությունն իրականացվել է հաստատության 10 աշխատակիցների՝ ղեկավար կազմի, վարչական, դասախոսական և ուսումնաօժանդակ համակազմի կողմից: Ինքնավերլուծության գործընթացին արտաքին շահակիցները և ներքին շահակիցները՝ ուսանողները, չեն մասնակցել: Ինքնավերլուծական զեկույցը հիմնականում եղել է նկարագրական:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել են չորս վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան,
3. ՄԿՈ (Մասնագիտական կրթություն և ուսուցում) ոլորտի առանձահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում միջին մասնագիտական ոլորտին համապատասխան,
4. Նախնական գնահատումը՝ որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց:

Նախանական այց

2023թ. մայիսի 11-ին առցանց հանդիպում է տեղի ունեցել ԱՊՔ-ի ղեկավար կազմի հետ: Հանդիպումներին ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը:

Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2023թ. մայիսի 22-25-ն ընկած ժամանակահատվածում: Փորձագիտական այցը սկսվել և ավարտվել է քոլեջի ղեկավար կազմի հետ հանդիպումներով:

Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպված ֆոկուս խմբային հանդիպումների՝ դասախոսներ, ուսանողներ և շրջանավարտներ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով:

Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, ինչպես նաև դասալսումներ, ռեսուրսերի դիտարկում և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրի պատասխանատուի, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ: Ընտրված 3 կրթական ծրագրերի շրջանակներում տեղի են ունեցել ինչպես պլանավորված, այնպես էլ ոչ պլանավորված դասալսումներ, ուսումնասիրվել են մասնագիտական մոդուլների շրջանակներում ուսանողներին տրվող առաջադրանքները, դասախոսների դասի պլանները՝ նպատակ ունենալով գնահատել ուսանողի առաջընթացի ճիշտ պլանավորումը:

Փորձագիտական այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին 11.07.2023թ.: Նախնական զեկույցի վերաբերյալ ԱՊՔ-ն դիտարկումներ չի ներկայացրել: փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 03.08.2023թ.:

_____

Անահիտ Տերտերյան

Փորձագիտական խմբի համակարգող

03.08.2023թ

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ
ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Պատմություն**. Արթիկի պետական քոլեջը հիմնադրվել է 1965 թվականին՝ որպես Լենինականի շինարարական տեխնիկումի մասնաճյուղ: 1966 թ. այն վերանորոգվել է և սկսել գործել որպես Արթիկի ինդուստրիալ-տեխնոլոգիական տեխնիկում: 1999 թվականի դեկտեմբերի 3-ին ԿԳՆ կոլեգիայի թիվ 2/7 Ե որոշմամբ տեխնիկումը վերանվանվել է Արթիկի պետական քոլեջ պետական ոչ առևտրային կազմակերպության:
   Արթիկի պետական քոլեջը կրթական և մշակութային հաստատություն է, որի հիմնական առաքելությունը գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումն է կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում: Քոլեջը, օգտագործելով իր մարդկային և նյութական ողջ ներուժն ու կարողությունները, ձգտում է բավարարել աշխատաշուկայի պահանջները՝ պատրաստելով որակյալ մասնագետներ:

2. **Կրթություն.** Քոլեջն իրականացնում է 8 կրթական ծրագրեր՝ «Հաշվապահական հաշվառում», «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ», «Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում», «Իրավագիտություն», «Դիզայն» և «Նախադպրոցական կրթություն»:
   ԱՊՔ-ն իր գործունեության վերջին 5 տարիներին տվել է ավելի քան 294 շրջանավարտ, ովքեր աշխատում երկրի տնտեսության տարբեր ոլորտներում, որպես միջին օղակի մասնագետներ: ԱՊՔ-ի գերազանց առաջադիմությամբ շրջանավարտներն իրենց ուսումը շարունակում են ՀՀ բուհերի համապատասխան մասնագիտության երկրորդ կամ երրորդ կուրսերում:
   Կրթական ծրագրերը քոլեջում սպասարկում են 52 դասախոսներ, վերջին տարիներին քոլեջում ավելացել են պրակտիկ ոլորտից ներգրավված մասնագետներ:

3. **Հետազոտություն.** Քոլեջում հետազոտական աշխատանքները իրականացվում են մոդուլային ծրագրերի, մասնագիտական ռեֆերատների, կուրսային աշխատանքների, պետական որակավորման քննությունների /դիպլոմային աշխատանքների/ շրջանակներում, որոնց արդյունքները կարողանում են բացահայտել թե՛ դասախոսին, և թե՛ ուսանողին՝ որպես ինքնուրույն հետազոտող:

4. **Արտաքին կապեր և միջազգայնացում.** Քոլեջը ակտիվորեն համագործակցում է տեղական հաստատությունների և գործատուների հետ ուսանողների պրակտիկաների կազմակերպման շրջանակներում: Ուսանողների ուսումնական և արտադրական պրակտիկաները կազմակերպվում են Արթիկ համայնքի և Շիրակի մարզի տարբեր կազմակերպություններում՝ «Արթիկի ՎԷՎ գործարան» ԲԲԸ-ում, Արթիկի «Լիլիթ-Մարիամ» ԱՊԸ-ում, «Արթիկի քաղաքային տնտեսության սպասարկում» ՀՈԱԿ-ում, Շիրակի մարզի թիվ 33 տարածքային ընտրական հանձնաժողովում, «ՍՄԱՐԹ-ԱՅԹԻ» ՍՊԸ-ում, «Անի» համատիրության համակարգչային կենտրոնում, Արթիկ «Արմաթ» ինժեներական լաբորատորիայում, Արթիկի թիվ 2

մանկապարտեզում, «Չեխ-Արմ-Ինվեստ» ՍՊԸ-ում, Գյումրի «Lenteqs» ՍՊԸ-ում և այլն։ Քոլեջը համագործակցում է նաև PEOPLE IN NEED հայաստանյան ներկայացուցիչների, «Դեպի Հայք» ՀԿ-ի, «Save the Children» միջազգային կազմակերպության հետ, որոնց աջակցությամբ քոլեջն իրականացրել է կարճաժամկետ ծրագրեր, ձեռք է բերել նյութատեխնիկական բազա, իրականցրել է վերանորոգման աշխատանքներ և այլն։

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն)։*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր: «Արթիկի պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպության առաքելությունը և տեսլականը ձևակերպված են 2020-2025թթ. Զարգացման ծրագրում (այսուհետ՝ ԶԾ): Քոլեջի առաքելությունը և տեսլականն են՝ «գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումը կրթության պետական ռազմավարության շրջանակներում: Քոլեջը, օգտագործելով մարդկային և նյութական ողջ ներուժն ու կարողությունները, ձգտում է բավարարել աշխատաշուկայի պահանջները՝ պատրաստելով որակյալ մասնագետներ: Այն հանդես է գալիս որպես առաջավոր տեխնոլոգիաներ տարածող, ուսանողակենտրոն կրթական միջավայր ու կրթության մատչելիություն ապահովող հաստատություն»: Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջի նյութական ռեսուրսային բազան և մարդկային ռեսուրսները դեռևս լիովին չեն բավարարում քոլեջի՝ առաջավոր տեխնոլոգիաները տարածողի դերը ստանձնելու համար: Քոլեջը միջին մասնագիտական կրթություն է կազմակերպում ՈԱՇ-ի 3-րդ (հանրակրթական հատվածով) և 5-րդ մակարդակին համապատասխան: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի և՛ ներքին, և՛ արտաքին շահակիցները ընդհանուր առմամբ կիսում են քոլեջի որդեգրած առաքելությունը:

Զարգացման ռազմավարական ծրագրով սահմանված են քոլեջի հիմնարար սկզբունքները և արժեքները, հիմնախնդիրները, զարգացման նպատակները, նպատակներին հասնելու խնդիրները և անհրաժեշտ քայլերը, ներկայացված է նաև SWOT վերլուծություն: Ի տարբերություն գործող ԶԾ-ի՝ նախորդ Զարգացման և բարեփոխման հայեցակարգում (2017-2020թթ.) քոլեջի առաքելությունը, տեսլականը հստակ ընդգծված չեն եղել, իսկ նպատակները չեն համապատասխանել քոլեջի ռեսուրսային հնարավորություններին:

Քոլեջի 4 հիմնական նպատակներ են՝ 1. Որակյալ կրթությունը, 2. Որակյալ և պատրաստված կադրային ներուժը, 3. Բարեկարգ շենքային պայմանները և ուսումնաօժանդակ բազան, 4. Որակի ապահովումը: ԶԾ նպատակների իրականացման համար կազմվել է պլան-ժամանակացույց, որտեղ նշված են անհրաժեշտ քայլերը, սակայն հստակեցված չեն ժամկետները, նախանշված չեն արդյունքների գնահատման ցուցիչները, ինչպես նաև բոլոր գործողությունների միակ պատասխանատուն տնօրենն է: Բացի այդ, Պլան-ժամանակացույցը չի արտահայտում նաև նպատակ-խնդիր-գործողություն հստակ շղթան, օրինակ՝ պլան-ժամանակացույցում ներկայացված է հետևյալ գործողությունը՝ ԱՀՈՒ ձևաչափով կրթական ծրագրի մշակում, սակայն ցույց տրված չէ, թե՛ ԶԾ որ նպատակից և խնդրից է այն բխում, իսկ գործողության դիմաց նշված է՝ կատարված է, իսկ որպես կատարող պատասխանատու նշված է տնօրենը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի շահակիցները, որպես քոլեջի արդյունավետ գործունեության ցուցանիշներ, ընկալում են ընդունելության թվերի աճը,

մատուցած որակյալ կրթական ծառայությունները, շրջանավարտների զբաղվածության և կրթությունը շարունակելու ցուցանիշները՝ հատկապես կարևորելով մասնագիտությամբ աշխատելու տվյալները, որոնք վերջին տարիներին որոշակիորեն բարելավվել են (առավել մանրամասն չափանիշ 4-ում) ։

Փորձագիտական ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ քոլեջի կողմից ԶԾ-ով սահմանված և իրականացված քայլերը հիմնականում վերաբերում են նպատակ 3-ին՝ ներքին հարդարման մասնակի աշխատանքներին, որոշ սարքավորումների ձեռքբերմանը «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» մասնագիտական կրթական ծրագրի համար: Առկա են նպատակներ, որոնց ուղղությամբ բավականաչափ քայլեր չեն իրականացվել, օրինակ՝ որակյալ և պատրաստված կադրային ներուժ ունենալու համար քոլեջը սահմանել է իրականացնել մասնագիտական վերապատրաստումներ, սահմանել խրախուսման մեխանիզմներ և այլն: Նշված խնդիրների իրագործման համար անհրաժեշտ են հավելյալ ֆինանսական միջոցներ, որը ներկա փուլում քոլեջի համար խնդրահարույց է:

Ըստ Որակի ապահովման քաղաքականության՝ քոլեջի ներքին շահակիցներն են ուսանողները, դասախոսները, վարչական աշխատակազմը, ուսումնաօժանդակ կազմը, իսկ արտաքին շահակիցներն են ծնողները, շրջանավարտները, գործատուները և այլն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԶԾ-ն մշակվել է քոլեջի տնօրենի կողմից որպես տնօրենի թեկնածուի առաջադրած զարգացման ծրագիր: ԶԾ-ն մշակելիս կարիքների վերհանում չի իրականացվել, տնօրենը այն մշակել է՝ հիմնվելով քոլեջում աշխատելու իր երկարամյա (մոտ 30 տարի) փորձի վրա: Այնուամենայնիվ, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ներկա փուլում և՛ ներքին, և՛ արտաքին շահակիցները կիսում են ԶԾ նպատակները և դրանք համարում են քոլեջի առաջնահերթությունները:

Որպես այդպիսին ԶԾ գնահատման հստակ մեխանիզմներ քոլեջում առկա չեն: Քոլեջի հաշվետվությունները փոխկապակցված չեն ԶԾ նպատակների հետ, դրանք կազմվում են քոլեջի ընթացիկ աշխատանքների արդյունքների հիման վրա: Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի գործունեությունը որոշակիորեն համապատասխանում է ԶԾ նպատակներին և խնդիրներին, այնուամենայնիվ գործընթացները իրականացվում են, ըստ ընթացիկ հրատապության, գործողությունների հաջորդականություն և առաջնահերթություններ սահմանված չեն:

Դատողություններ: Փորձագիտական խումբը բարձր է գնահատում ԱՊՔ-ի դերակատարությունը տարածաշրջանում միջին մասնագիտական կրթությամբ մասնագետների պատրաստման հարցում, կարևոր է ընդգծել, որ քոլեջը հաճախ հանդիսանում է Արթիկ քաղաքի և հարակից գյուղերի ուսումնառողների համար կրթությունը շարունակելու միակ հնարավորությունը սոցիալական և այլ գործոններով պայմանավորված, որը ընդգծում է քոլեջի ռազմավարական և սոցիալական նշանակությունը: Դրական է, որ քայլեր են իրականացվել քոլեջի առաքելության հստակեցման ուղղությամբ, փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջի՝ առաջավոր տեխնոլոգիաներ տարածողի դերը շատ կարևոր է տարածաշրջանի զարգացման

համար, այնուամենայնիվ այս փուլում քոլեջի ունեցած նյութական և մարդկային ռեսուրսները լիովին հնարավորություն չեն ընձեռում ապահովելու նշված դերակատարությունը։

Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի տնօրենի կողմից Զարգացման ծրագրի մշակումը, որն, ըստ էության, արտացոլում է քոլեջի առաքելության իրագործման համար տվյալ փուլում կարևոր ռազմավարական նպատակները և խնդիրները։ Փորձագիտական խումբը փաստում է, որ ԶԾ-ն նախադրյալ է հանդիսացել քոլեջում տեղ գտած բարեփոխումների համար։ Այս փուլում քոլեջի հիմնական խնդիրները ակնհայտ են բոլորի համար, այդ իսկ պատճառով ծրագրում տեղ գտած նպատակները և խնդիրները արտացոլում են բոլոր շահակիցների առաջնահերթ կարիքները։ Այսքանը հաշվի առնելով հանդերձ՝ փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջում ռազմավարական պլանավորումը ձևավորման փուլում է։ Այս փուլում քոլեջը կարիք ունի օբյեկտիվ տվյալների վերլուծության, որը լավագույն տարբերակն է շահակիցների կարիքներն առավել խորքային և ուղղորդված դուրս բերելու համար, քանի որ միայն այդ դեպքում է հնարավոր գտնելու այլընտրանքային և արդյունավետ լուծումներ առաջընթաց ապահովելու համար։

Դրական է, որ Զարգացման ծրագրի իրագործման համար քոլեջը մշակել է պլան-ժամանակացույց, այնուամենայնիվ հստակ պատասխանատուների, ժամկետների և գնահատման ցուցիչների բացակայությունը կարող է հանգեցնել ԶԾ-ի ոչ ամբողջական իրականացմանը։ Դրական է, որ Քոլեջում առկա է հաշվետվողականության համակարգ։ Միևնույն ժամանակ, Զարգացման ծրագրի առաջնահերթությունների հիման վրա հաշվետվությունների կազմումը կնպաստի հաստատությունում երկարաժամկետ պլանավորման արդյունավետության և առաջընթացի գնահատմանը։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը տարածաշրջանում ունի կրթական և սոցիալական ռազմավարական կարևոր նշանակություն, քոլեջի մասնագիտությունները սպասարկում են տարածաշրջանի կարիքները, սահմանված է քոլեջի առաքելությունը, որը կիսում են ներքին և արտաքին շահակիցները, այն համապատասխանում է ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին, փորձագիտական խումբը գտնում է, որ բավարարում է չափանիշի պահանջները։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Արթիկի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր: Արթիկի պետական քոլեջի կառավարումն իրականացվում է հիմնադրի, լիազորված մարմնի, քոլեջի կոլեգիալ կառավարման Խորհրդի և գործադիր մարմնի՝ տնօրենի միջոցով: Քոլեջն իր կառավարումն իրականացնելիս առաջնորդվում է իր կանոնադրությամբ և կանոնակարգերով: Քոլեջի կառավարման մարմիններն են Կառավարման խորհուրդը (վերակազմավորվել է 2022թ. օգոստոս ամսին), մանկավարժական, տնօրինական, ուսումնամեթոդական խորհուրդները: Նշված Խորհուրդներն առաջնորդվում են իրենց կանոնակարգերով: ԱՊՔ-ում 2021թ. հունվարից կատարվել են կառուցվածքային փոփոխություններ՝ պայմանավորված նոր տնօրենի ընտրությամբ (2020թ. դեկտեմբեր) և նրա կողմից ներկայացված Զարգացման ծրագրի: Նոր կառուցվածքում փորձ է կատարվել կանոնակարգել ստորաբաժանումները՝ ըստ հիերարխիկ կապերի, հստակեցնելով ստորաբաժանումների և առանձին պաշտոնների լիազորությունները, աշխատանքների շրջանակը, գործունեության կարգերը, աստիճանակարգությունը: Հարկ է նշել, որ նոր կառուցվածքային գծապատկերում ավելացվել են կառավարման, ուսանողական, մանկավարժական խորհուրդները և որակի ապահովման պատասխանատուն: Աշխատակիցների պաշտոնի նկարագրերը մշակվել են 2021թ.՝ փորձելով հստակեցնել նրանց գործառույթները, Քոլեջում եղած բոլոր հաստիքների համար առկա են համապատասխան նկարագրեր:

Փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ներկայիս կառուցվածքային գծապատկերը դեռևս լիարժեք չի արտահայտում իրական գործառնական կապերը, ինչպես նաև առկա են անհամապատասխանություններ կառուցվածքային գծապատկերի և պաշտոնի նկարագրերի միջև, օրինակ՝ ըստ գծապատկերի պրակտիկայի վարիչը ենթարկվում է տնօրենին, սակայն համաձայն պաշտոնի նկարագրի և փաստացի գործունեության պրակտիկայի վարիչը հաշվետու է ուսումնական գծով տնօրենի տեղակալին, ըստ պաշտոնի նկարագրի կուրսղեկները հաշվետու են տնօրենին, իսկ գծապատկերով՝ կազմակերպչադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալին: Նաև առկա են հասկացությունների/անվանումների տարբերություններ, օրինակ՝ գծապատկերում նշված է կրթադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, իսկ պաշտոնի նկարագրով՝ դաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն: Պետք է փաստել, որ նման օրինակները շատ են:

Քոլեջում գործող խորհուրդների գործունեության իրականացման նպատակով մշակվել են կանոնակարգեր, որտեղ բաշխված են նաև տվյալ խորհուրդների գործառույթները, սակայն ուսումնասիրությունը ցույց տվեց, որ քոլեջը ամբողջովին չի պահպանում կանոնակարգերով սահմանված գործընթացների տրամաբանական հաջորդականությունը, օրինակ՝ քոլեջում գործում է «Ուսումնական պլանների, մոդուլների ծրագրերի մշակման, վերանայման, հաստատման կանոնակարգ», որը սահմանում է, որ ուսումնական պլանները հաստատվեն տնօրենի կողմից՝ ամբիոնում հավանության արժանանալուց, ուսումնամեթոդական խորհրդում

երաշխավորվելուց և ԿԽ նիստում քննարկվելուց հետո: Ուսումնական պլանների վերանայման նմանօրինակ հետագիծ (օրինակ 0723.01.5 ԱՀՈՒ) տեսանելի չէ: Կառավարման խորհրդի վերջին 5 տարվա արձանագրությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ԿԽ նիստերի քննարկման առարկա չեն հանդիսացել ՄԿԾ-ների ուսումնական պլանների փոփոխությունները, մոդուլների և ծրագրերի հաստատման վերաբերյալ հարցերը: Պետք է նաև նշել, որ քոլեջում առկա պաշտոնական փաստաթղթերի մեծ մասն ունեն իրավական-տեխնիկական բացթողումներ, օրինակ՝ ամսաթվերի բացակայություն, համապատասխան խորհրդում կամ նիստում որոշման օրվա բացակայություն:

Կրթական ծրագրերի իրականացման համար Քոլեջում գործում են 4 ամբիոններ՝

1. Հանրակրթական, հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական առարկաների ամբիոն,
2. Ֆիզկուլտուրայի, դիզայնի, հագուստի պատրաստման տեխնոլոգիայի և նախադպրոցական կրթության մասնագիտական մոդուլների ամբիոն,
3. հաշվողական տեխնիկայի և իրավագիտության մասնագիտական առարկաների ամբիոն,
4. տնտեսագիտական և ավտոմասնագիտական առարկաների ամբիոն:

Ըստ ամբիոնի վարիչի պաշտոնի նկարագրի՝ վերջիններիս որակավորումները պետք է համապատասխանեն ամբիոնում իրականացվող կրթական ծրագրերին: Փորձագիտական խումբը փաստում է, որ ամբիոններում ներառված մասնագիտությունների իրարից շատ տարբեր լինելով պայմանավորված՝ ամբիոնների վարիչների որակավորումները թույլ չեն տալիս ամբողջովին համապատասխանել սահմանված պահանջին, օրինակ՝ Ֆիզկուլտուրայի, դիզայնի, հագուստի պատրաստման տեխնոլոգիայի և նախադպրոցական կրթության մասնագիտական մոդուլների ամբիոնը սպասարկում է 4 ՄԿԾ: Քոլեջը նույնպես գիտակցում է նշված խնդիրը և պլանավորում է վերանայել ամբիոնները և նրանցում ընդգրկված մասնագիտությունները:

Պետք է նշել, որ քոլեջում երբեմն նկատելի է նաև աշխատակիցների գերբեռնվածություն, մասնավորապես՝ որակի ապահովման պատասխանատուի, ով միևնույն ժամանակ և՛ դասախոս է, և՛ բազմաոլորտ ամբիոնի վարիչ:

Ֆինանսական միջոցները ձևավորվում են պետական բյուջեից, իսկ արտաբյուջեն ձևավորվում է վճարովի հիմունքներով սովորող ուսանողների վարձավճարներից, որը կազմում է ընդամենը 10.03%: Այլընտրանքային ֆինանսավորման միջոցների ձևավորման աղբյուրներ քոլեջը չունի:

Դասախոսներն ընդգրված են քոլեջի կառավարման մի շարք մարմիններում, մասնավորապես՝ մանկավարժական, տնօրինական, մեթոդական խորհուրդներում: Կառավարման խորհուրդն ունի 11 անդամ, որոնցից 6-ը արտաքին շահակիցներ են, հինգը՝ ներքին՝ երեք ուսանող, երկու դասախոս: Ուսանողության ներկայացուցիչները ընտրվել են ուսանողական խորհրդի նիստում՝ փակ քվարկությամբ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները և դասախոսները ակտիվ չեն կառավարման խորհրդում, քանի որ բարձրաձայնվող հարցերը հիմնականում ֆինանսական ներդրումներ են պահանջում, որն այս պահին քոլեջը չունի, օրինակ՝ դասախոսների մասնագիտական վերապատրաստումներ: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ խորհրդի անդամները տեղյակ են քոլեջի նպատակներին և նրա առջև դրված խնդիրներին, ինչպես նաև կիսում են դրանք: Նոր ձևավորված

կառավարման խորհրդի անդամներն (հատկապես արտաքին շահակիցները) ակտիվ ներգրավված են քոլեջի հիմնախնդիրների լուծման գործընթացում, օրինակ՝ աջակցություն ջեռուցման կայուն համակարգի ներդրման, ֆիզկուլտուրայի մարզադահլիճի վերանորոգման նախագծերի մշակման աշխատանքներում:

Որպես երկարաժամկետ պլանավորում քոլեջը դիտարկում է ԱՊՔ զարգացման ծրագիրը: Քոլեջի կարճաժամկետ պլանավորումն իրականացվում է ստորաբաժանումների տարեկան աշխատանքային պլանների միջոցով: Աշխատաքնային պլանների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք փոխկապակցված չեն ԶԾ քայլերի հետ: Բացի այդ, հաճախ պլաններում չի արտահայտվում այն գործընթացները, որոնք պետք է իրականան կիսամյակի կամ տարվա ընթացքում, պլաններում ներկայացված է տվյալ ստորաբաժանման/աշխատակցի գործառույթները, օրինակ՝ տնօրենի օգնականի աշխատանքային պլանով նախատեսված է «ներկայացնել քոլեջի շահերը այլ կազմակերպությունների, պետական հիմնարկություններին և ֆիզիկական անձանց»: Քոլեջի ստորաբաժանումների և խորհուրդների աշխատանքային պլաններով նախատեսված քայլերը ոչ միշտ են հետագայում դառնում քննարկումների օրակարգային հարցեր, օրինակ՝ Ուսումնամեթոդական խորհրդի 2021-2022 ուսումնական տարվա պլանը հաստատվել է տնօրենական խորհրդի առաջին նիստում (27.08.2021թ.), սակայն աշխատանքային պլանում նախատեսված կետերը հետագա նիստերում քննարկման առարկա չեն հանդիսացել, Օրինակ՝ «0212, 0613 և 1041 մասնագիտությունների վերանայված ուսոիմնական պլանների քննարկում և հաստատում» գործողության իրականացումը օրակարգային հարց չի դարձել, առկա չեն համապատասխան արձանագրություններ:

Քոլեջի 2017-2020 Զարգացման և բարեփոխման հայեցակարգում, այնուհետև 2020-2025 Զարգացման ծրագրում իրականացված է SWOT վերլուծություն, որտեղ ներկայացված են քոլեջի ուժեղ և թույլ կողմները, հնարավորությունները և վտանգները, վերլուծության մեջ որոշակիորեն ներկայացված են նաև ներքին և արտաքին գործոններ: Պետք է փաստել, որ ներքին և արտաքին գործոնների վերաբերյալ տվյալները հիմնված են միայն աշխատակիցների բզմամյա փորձառության վրա, այլ ուսումնասիրություններ և վերլուծություններ չեն իրականացվել:

Փորձագիտական այցը և փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ քոլեջի գործընթացները հիմնականում գտնվում է ՊԻԳԲ շրջափուլի պլանավորում և իրականացում փուլերում, վերջիններումս նույնպես առկա են որոշակի խնդիրներ: Բարելավումները տեղի են ունենում ոչ կանոնակարգված և առանց օբյեկտիվ տվյալների հավաքագրման և վերլուծության, հիմնականում՝ ըստ հայեցողության:

Քոլեջն դեռևս չունի իր գործընթացների արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմներ, սակայն ունի ձևավորված գործընկերային շրջանակ, որոնք մասնակի հետադարձ կապ են ապահովում, որի հիման վրա էլ տեղի են ունենում հատվածային բարելավումներ ՄԿԾ-ներում, օրինակ՝ հետադարձ կապի հիման վրա ներդրվել է ՀԾ-ն «Հաշվապահական Հաշվառում» ՄԿԾ-ում: Կրթական ծրագրերի արդյունավետության մասին տեղեկատվության հավաքագրման ու ամփոփման գործընթացները սահմանափակվում են ամփոփիչ ատեստավորմանը մասնակցող արտաքին շահակիցների (հանձնաժողովի նախագահի) հաշվետվությամբ, որտեղ

առանձնակի թերություններ կամ բարելավման առաջարկություններ նշված չեն։ Կրթական ծրագրերի մշտադիտարկման հստակ գործիքակազմ քոլեջում առկա չէ, որակի ապահովման գործիքակազմը պլանավորման փուլում է։

ԱՊՔ-ն վերջին տարիներին ակտիվացրել է իր ֆեյսբուքյան էջը և մշակել է կայքեջը, որը որոշակիորեն թափանցիկ և հանրության համար մատչելի է դարձրել քոլեջի կրթական գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունը։ Քոլեջի ֆեյսբուքյան էջում 2021թ.-ին ներկայացվել է «Հաջողության պատմություն» վերնագրով տեսաուղերձ, որտեղ շրջանավարտները ներկայացրել են իրենց անցած ուղին, ներկայիս աշխատանքը, նման հրապարակում տեղի է ունեցել միայն մեկ անգամ։ Տեղեկատվության հրապարակումների գնահատում քոլեջը դեռևս չի իրականացրել։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԱՊՔ-ն փորձել է իրականացնել կառուցվածքային բարեփոխումներ, որոնք իրենց ազդեցություն են ունեցել ստորաբաժանումների գործառնական կապերի, պաշտոնների լիազորությունների շրջանակների հստակեցման համար։ Գնահատելի է նաև, որ քոլեջը մշակել է պաշտոնների նկարագրեր, սակայն այս փուլում դրանք դեռևս լիովին չեն արտահայտում տվյալ պաշտոնների իրական գործառույթների շրջանակը, որն էլ իր հերթին հանգեցնում է պաշտոնի նկարագրերի և կառուցվածքային գծապատկերի անհամապատասխանությանը։ Փորձագիտական խումբը գտնում է, որ ներկա փուլում գործառնական իրական կապերի և փաստաթղթային հենքի համապատասխանեցումը, ինչպես նաև աստիճանակարգության վերանայումը թույլ կտան քոլեջին հստակեցնել կառավարման օղակների դերակատարությունը քոլեջի ռազմավարական զարգացման գործընթացում՝ բարձրացնելով վերջիններիս արդյունավետությունը։

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ կառավարման գործընթացները համակարգելու համար քոլեջի կողմից մշակվել են կառավարման խորհուրդների աշխատանքները կանոնակարգող փաստաթղթային հենք, այնուամենայնիվ այդ կանոնակարգերի ոչ լիարժեք իրականացումը հանգեցրել է կառավարման տարբեր մակարդակներում խորհուրդների գործառույթների խաչմանը և կառավարման հիերարխիկ կապերի խախտմանը։

Փորձագիտական խմբի համար մտահոգիչ է իրարից ոլորտային տարբեր մասնագիտությունների միավորումը մեկ ամբիոնի շրջանակներում, որը մի կողմից հանգեցրել է ամբիոնի վարիչների գերբեռնվածությանը, մյուս կողմից ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնող մասնագետին ներկայացվող պահանջների ոչ համապատասխանությանը, արդյունքում կարող է վտանգվել կրթական ծրագրերի կառավարման գործընթացները։ Դրական է այն, որ քոլեջը գիտակցում է ամբիոնների վերանայման անհրաժեշտությունը և այդ ուղղությամբ նախատեսում է քայլեր։ Փորձագիտական խումբը գտնում է, որ այս ուղղությամբ բարեփոխումները թույլ կտան հավասարաչափ զարգացնել և լավարկել բոլոր կրթական ծրագրերը։

Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի նոր ձևավորված կառավարման խորհրդի աշխատանքները և քոլեջի բարձրաձայնած խնդիրների լուծման ուղղությամբ նրանց նախաձեռնողականությունը։ Գովելի է նաև այն, որ քոլեջի ղեկավարությունը բաց է առաջարկությունների և շահագրգիռ անձանց ներդրումների համար։

Քոլեջում իրականացված կարճաժամկետ ծրագրերը խթան են հանդիսացել ընթացս կրթական ռեսուրսների և ուսումնական միջավայրի բարելավման համար, այսուհանդերձ ֆինանսական միջոցների բազմազանեցման հնարավորությունները մնում են սահմանափակ: Ֆինանասական միջոցների տնօրինումը, ըստ էության, հստակ փոխկապակցված չէ ԶԾ-ի հետ, սակայն փորձագիտական խումբը փաստում է, որ տեղի են ունեցել ԶԾ-ով նախատեսվող որոշակի առաջընթաց քայլեր: Միևնույն ժամանակ փորձագիտական խումբը գտնում է, որ ֆինանսական միջոցների դիվերսիֆիկացիան ներկա փուլում հնարավոր է միայն հստակ համակարգման և այլընտրանքային աղբյուրների որոնման ուղղորդված աշխատանքների միջոցով, որը թույլ կտա համեմատաբար կայուն ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներ ապահովել:

Դրական է նաև քոլեջի կառավարման մարմիններում դասախոսների և ուսանողների մասնակցայնության ապահովումը, այնուամենայնիվ փորձագիտական այցը ցույց տվեց, որ խորհուրդների աշխատանքներում վերջիններիս գործուն ակտիվ մասնակցությունը տեսանելի չէ, որը կարող է հանգեցնել դասախոսական և ուսանողական կազմերի կարիքների չբարձրաձայնմանը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում Քոլեջի տնօրենի կողմից ներկայացված ԶԾ-ի առկայությունը, որն առաջընթաց քայլ է հաստատության համար, այսուհանդերձ, այն դեռևս չի դարձել հիմք կարճաժամկետ պլանավորումների համար, որը ռիսկային է դարձնում երկարաժամկետ պլանավորման ամբողջական կատարումը:

Մտահոգիչ է, որ կառավարման ՊԻԳԲ շրջափուլն ամբողջությամբ չի գործում ինչպես ՄԿԾ-ների կառավարման, փաստաթղթերի մշակման, այնպես էլ մյուս բոլոր գործընթացներում, որը հանգեցրել է մշակված փաստաթղթային հենքի, իրականացվող գործընթացների միջև կապի խզման, որն էլ իր հերթին կարող է բացասաբար ազդել կառավարչական գործընթացների արդյունավետության վրա:

ՊԻԳԲ շրջափուլի իրականացման համար փորձագիտական խումբը կարևորում է տվյալների հավքագրման, վերլուծման մեխանիզմների ներդրումը՝ նպաստելով արդյունքների գնահատմանը և առկա խնդիրների բացահայտմանը: Վերոնշյալ մեխանիզմները կարևոր են նաև բարելավման գործընթացների վերաբերյալ տվյալահենք որոշումների կայացմանը:

Դրական է դիտվում, որ քոլեջը ձեռնամուխ է եղել ունենալ կայքէջ, վերջինս դեռևս տեղեկատվությամբ համալրման կարիք ունի, ներկայումս առկա են քոլեջի վերաբերյալ որոշ հրապարակումներ, տեղադրված են ընթացակարգեր, կանոնակարգեր: Փորձագիտական խումբը նշում է, որ շրջանավարտների հետագծի վերաբերյալ տեղեկատվութան և նրանց հաջողած պատմությունների հրապարակումը կնպաստի քոլեջի վարկանիշի բարձարցմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում կանոնակարգված չէ որոշումների կայացման գործընթացները, լիարժեք չեն գործում կառավարման հիերերխիկ կապերը, առկա են անհամապատասխանություններ կիրառվող փաստաթղթերի և իրականում ընթացող գործընթացների միջև, դասախոսների և ուսանողների ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացում պասիվ է, երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորումները փոխկապակցված չեն, ամբողջությամբ չի գործում ՊԻԳԲ շրջափուլը, որոշումների կայացումը

հիմնված չէ տվյալների վրա, որակի ապահովման մեխանիզմները չեն նպաստում կառավարման և վարչարարության բարելավմանը, փորձագիտական խումբը գտնում է, Արթիկի պետական քոլեջը չի բավարարում չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Արթիկի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր: ԱՊՔ–ն իրականացնում է միջին մասնագիտական 8 կրթական ծրագրեր՝ «Հաշվապահական հաշվառում», «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ», «Փոխադրումների կազմակերպումը և կառավարումը տրանսպորտում», «Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում», «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա», «Նախադպրոցական կրթություն», «Իրավագիտություն», «Դիզայն»: Նշված կրթական ծրագրերն իրականացվում են առկա ուսուցմամբ՝ վճարովի և անվճար հիմունքներով: Կրթական ծրագրերի իրականացման համար հիմք են ծառայում պետական կրթական չափորոշիչները:

Ներքին և արտաքին շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ իրականացվող միջին մասնագիտական կրթական ծրագրերի ուղղությունները բխում են տարածաշրջանի (Արթիկ քաղաքի և հարակից գյուղերի) կարիքներից:

Մասնագիտական կրթական ծրագրերը բաղկացած են ուսումնական պլաններից և մոդուլային ծրագրերից: Վերջիններս կազմված են բացատրագրից, ուսումնառության թեմաներից, գնահատման մեթոդից, ուսումնառության ակնկալվող արդյունքից և գրականության ցանկից, մի շարք դեպքերում գրականության ցանկը բացակայում է կամ կցված է ոչ արդիական գրականություն:

Քոլեջը ՊԿՉ-ների տեղայնացման նպատակով, թույլատրելիի սահմաններում իրականացրել է ուսումնական պլանների վերանայման աշխատանքներ:

«Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» կրթական ծրագրում ուսումնական պլանները համապատասխանեցվել են ԱՀՈՒ ձևաչափին (2022թ.), հիմնական փոփոխությունը կայացել է նրանում, որ պրակտիկաներին հատկացված ընդհանուր ժամաքանակի բաշխվել է ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլների միջև՝ որպես գործնական ուսուցում ձեռնարկությունում: ՄԿԾ-ն կազմելիս լիովին հաշվի չի առնվել ոլորտի առանձնահատկությունը, քննարկումներ տեղի

չեն ունեցել ոլորտային ներկայացուցիչների և այլ քոլեջների տվյալ կրթական ծրագիրն իրականացնող մասնագետների հետ։

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» կրթական ծրագիրը իրականացվում է հիմք ընդունելով 2010թ. ՊԿՉ-ն (շնորհվող որակավորումը՝ ֆիզկուլտուրայի ուսուցիչ, մարզիչ), ներկայումս քոլեջը տվյալ կրթական ծրագրով շնորհում է որակավորում՝ «դասավանդող ֆիզկուլտուրայի» (0114.01.01.5), սակայն տվյալ որակավորմանը համապատասխանող նոր վերանայված ՊԿՉ առկա չէ։ Տվյալ որակավորմամբ շրջանավարտները կարող են աշխատել միայն նախադպրոցական կրթություն տրամադրող հաստատություններում՝ որպես ֆիզկուլտուրայի հրահանգիչ։ Նման որակավորում շնորհելու համար ՀՀ-ում առկա չէ համապատասխան ՊԿՉ։ Քոլեջի կողմից ներկայումս կիրառվող ՊԿՉ-ն չի ապահովում նախադպրոցական տարիքի երեխաների ֆիզիկական դաստիարակությանը վերաբերող գիտելիքներ և կարողություններ։ Այս ամենի մասին փաստում է նաև քոլեջը։ 2021, 2022 թվականներին ԱՊՔ-ն առաջարկություն է ներկայացրել ՄԿՈՒԶԱԿ՝ «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտության, դասավանդող՝ ֆիզկուլտուրայի որակավորմամբ ՊԿՉ-ն և օրինակելի ուսումնական պլանը վերանայելու համար, արդյունքում առաջարկին ընթացք չի տրվել։

ԱՊՔ-ն ինքնավերլուծության շրջանակներում փորձել է իրականացնել մասնագիտական կրթական ծրագրերի վերջնարդյունքների և ՈԱՇ-ի, ինչպես նաև ՄԿԾ վերջնարդյունքների և մոդուլային ծրագրերի համապատասխանության, ուսումնառության արդյունքների և դասավանդման, գնահատման մեթոդների քարտեզագրում։ Վերջիններս ՄԿԾ-ների մաս չեն դարձել, ինչպես նաև չեն արտահայտում մոդուլային ուսումնառության արդյունք-դասավանդում-գնահատում կապը։

Ուսումնական պլաններով նախատեսված պահուստային ժամերը հատկացվել են որոշ գործող մոդուլային ծրագրերի կամ ավելացվել են նոր մոդուլային ծրագրեր, օրինակ՝ «Հաշվապահական հաշվառում» ՄԿԾ-ում գործատուի առաջարկով ավելացվել է ՀԾ ծրագրի ուսուցումը «Հաշվապահական հաշվառումը բյուջետային կազմակերպություններում» մոդուլի շրջանակներում, իսկ «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» և «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» ՄԿԾ-ներում պահուստային ժամերը ուղղվել են «Համակարգչային օպերատորության հիմունքներ», «Ձեռներեցություն» առարկային և մոդուլին, փոփոխությունների հիմքում ընկած չեն աշխատաշուկայի կարիքները (բացի հաշվապահությունից), փոփոխությունների անհրաժեշտությունը քննարկվել է միայն ամբիոններում։

Ուսումնական պլաններում արտահայտված են նաև նախասիրական առարկաներ, օրինակ՝ «Հաշվապահական հաշվառում» ՄԿԾ-ում «Վարվեցողության հիմունքներ» առարկան, իսկ «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» ՄԿԾ-ի համար՝ «Տարիքային հոգեբանություն»։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսպլանով ներկայացված նախասիրական ժամերը հիմնականում չեն իրականացվում, ինչպես նաև թափուր են ընտրովի առարկաների ժամերը։

Ըստ «Ուսանողների պրակտիկաների կազմակերպման, անցկացման և գնահատման» կարգի՝ Քոլեջում իրականացվում են ուսումնական, տեխնոլոգիական, արտադրական և նախաավարտական պրակտիկաներ, որոնց տևողությունը, ժամկետները և ըստ մոդուլների բաշխվածությունը որոշվում են ուսպլաններով։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ առկա

է փաստաթղթերում ներկայացվող անվանումների և փաստացի իրականացվող ծրագրերի միջև անհամապատասխանություններ, օրինակ՝ «Հաշվապահական հաշվառում» ՄԿԾ-ի ուսումնական պլանում ներառված է ուսումնական պրակտիկա տեսական ուսուցմամբ, տեխնոլոգիական պրակտիկա և նախադիպլոմային պրակտիկա, սակայն փաստացի իրականացվում է ուսումնական, արտադրական, տեխնոլոգիական և նախաավարտական պրակտիկաներ՝ ըստ համապատասխան ծրագրերի: Պրակտիկայի ծրագրերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանք չեն քննարկվել համապատասխան ամբիոնների նիստերում, իսկ գործող ծրագրերի բովանդակությունը ամբողջ ծավալով չի արտացոլում ուսանողների տվյալ ժամանակահատվածում ուսումնասիրած մասնագիտական մոդուլները և դրանց բովանդակությունը, նկատվում են ծրագրային կրկնություններ, օրինակ՝ 2-րդ կուրսի 2-րդ կիսամյակում ներառված ուսումնական պրակտիկայի ծրագրի թեմաները համընկնում են 3-րդ կուրսի 2-րդ կիսամյակում անցկացվող տեխնոլոգիական պրակտիկայի հետ: Հագուստի պատրաստման տեխնոլոգիա ՄԿԾ-ում նույնպես նկատելի է ուսումնական պրակտիկաների պլանավորման և իրականացման շեղումներ, օրինակ «Տղամարդու հագուստի նախագծում» մոդուլում նախատեսված է, որ ուսումնական պրակտիկայի ընթացքում ուսանողները CAMP ծրագրի օգնությամբ պատրաստեն և բազմացնեն լեկալներ, սակայն մասնագիտական հանդիպումները փաստեցին, որ նման աշխատանքներ չեն իրականացվում: Տվյալ ուսումնական պրակտիկայի ծրագրում առկա են նաև ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռք բերման տրամաբանական հաջորդականության և բովանդակության հակասություններ, օրինակ՝ արտադրամասում նախատեսում է տեսական դասի անցկացում:

ԱՊՔ-ն դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության ժամանակ հիմնականում առաջնորդվում է ՊԿՉ-ի խորհրդատվություններով, համաձայն որի դասախոսներն ազատ են դասավանդման մեթոդների ընտրության հարցում՝ կախված ուսումնառության արդյունքներից: Փորձագիտական խումբը փաստում է, որ քոլեջը չունի վերահսկման մեխանիզմ, որը ապահովում է ընտրված մեթոդների համապատասխանությունը ակնկալվող ուսումնառության արդյունքներին: Ինչ վերաբերում է դասավանդման մեթոդներին՝ ներքին շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ գերակշռում է թելադրությունների միջոցով ուսումնառության նյութերի տրամադրումը: Ուսանողներին տրվում են նաև լրացուցիչ ուսումնառության նյութեր, էլեկտրոնային նյութեր, ձեռնարկներ, օգտակար հղումներ: Դասալսումներից պարզ դարձավ, որ դասախոսները հիմնականում կիրառում են հարց-պատասխան, զրույց-քննարկում մեթոդները: Դասավանդման մեթոդները տարբեր առաջընթաց ունեցող ուսանողների համար բազմազանեցված չեն, ուսանողները համաչափ չեն ներգրավվում դասապրոցեսում: Կիրառված մեթոդների մեծ մասը դասախոսակենտրոն են:

Դասախոսի դասի պլանավորման գործիք է ուսումնառության պլանը, որն իր մեջ ընդգրկում է ուսումնառության արդյունքը, կատարման չափանիշը, նպատակը, ուսումնառության գործընթացը, ժամանակը, մեթոդը, ուսումնառության ռեսուրսը և առանցքային կետերի ամփոփումը: Մեկ մոդուլի շրջանակներում շարունակական դասալսումները ցույց տվեցին, որ առկա են դասի պլավորման և իրականացման միջև շեղումներ, օրինակ՝ ըստ դասի պլանի, նախատեսված է երկու ակադեմիական ժամում իրականացնել արտադրանքի նախագծում, իսկ

դրանից հետ արտադրանքի ձևաթղթերի պատրաստում, դասալսումները ցույց տվեցին, որ ուսանողները անհրաժեշտություն են ունեցել նախագծման աշխատանքները ավարտին հասցնելու համար նաև օգտագործել 3-րդ ակադեմիական ժամը։

Ուսանողներին տրվող հանձնարարականների դիտարկումը ցույց տվեց, որ ընդհանուր կրթամասի դասախոսները առաջադրանքները որոշակիորեն փոխկապակցում են մասնագիտական ոլորտին, օրինակ՝ ինֆորմատիկայի դասաժամին հաշվապահները սովորում են excel-ով աշխատավարձ հաշվել, նման օրինակներ առկա են նաև մյուս հանրակրթական առարկաներում։

Ուսումնառության պլաններում համապատասխան արդյունքի ձեռքբերման համար առանձնացված են դասավանդման մեթոդների, ինչպես նաև ուսանողներին տրամադրող հանձնարարականների (նաև տնային) բաժին։ Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ հանձնարարականների բաժնում պարզապես նշված է «տալ հանձնարարականներ», իսկ ընտրված դասավանդման մեթոդները հիմնականում չեն նպաստում սահմանված ակնկալվող արդյունքների ձեռքբերմանը, օրինակ՝ օձիքի մշակում մոդուլում դասի նպատակն է, որ ուսանողը իմանա՝ ինչ է սոսնձային միջնադիրը, նրանց տեսակները և կարողանա միացնել տակի օձիքին, դասավանդման մեթոդներն են՝ հարց ու պատասխանը, զրույցը և ցուցադրումը, նշված չէ, թե այդ արդյունքն ապահովելու համար ուսանողը ինչպիսի գործնական առաջադրանք պետք է իրականացնի և ինչպես է այն գնահատվելու։

Քոլեջում գործում է «Սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ընթացիկ ստուգման և գնահատման կարգ»՝ հաստատված 2021թ.։ Հարկ է նշել, որ կարգը տեղայնացված չէ, մասնավորապես այն չի արտացոլում ուսանողների գիտելիքների և կարողությունների ստուգման կազմակերպումը, կիսամյակային և տարեկան գնահատականների ձևավորումը, գնահատման արդյունքների բողոքարկման և վերահանձնման գործընթացը, ինչպես նաև ուսանողների կողմից բաց թողնված ժամերի վերականգնումը։

Ուսանողների ընթացիկ գնահատումն իրականացվում է հարցումներով, թեստերով, գնահատման թերթիկներով և այլ ձևերով։ Ներկայացված բոլոր ՄԿԾ-ների գնահատման թերթիկները ունեն տեսական գիտելիք գնահատող բնույթ։ Օրինակ՝ «Հաշվապահական հաշվառում» մոդուլների գնահատման թերթիկներում ուսանողներին ներկայացվում են հաշվապահական հաշվառման տարբեր բանաձևեր, օրինակ՝ պաշարների ինքնարժեքը, մեթոդները և հաշվարկի բանաձևերը, սակայն առկա չեն գործնական առաջադրանքներ, օրինակ՝ բանաձևերի կիրառումը որևիցէ դեպքի հիման վրա։

«Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» ՄԿԾ-ում ընթացիկ տեսական գիտելիքները գնահատում են բանավոր հարցմամբ և թեստային աշխատանքներով։ Գործնական հմտությունները գնահատվում են ըստ տեխնիկայի ճիշտ կատարման կարողությունների և տեխնիկայի մեկնաբանության։ Մասնագիտական դասալսումները ցույց տվեցին, որ դասախոսության ընթացքում տեսական նյութը փորձում են փոխկապակցել մարզիկների անձնական փորձառության և հնարավոր սխալների հետ, օրինակ լողալ սովորելու հիմանական սխալները որոնք են, որն է մարզիկի փորձը և որը կլիներ ամենաճիշտ տարբերակը։ Տրվում են նաև վերլուծական աշխատանքներ մասնագիտական մոդուլներում կապված մրցաշարերի,

մարզական տեխնիկայի, վիճակագրության և այլնի հետ: Ուսանողների և դասախոսների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ նման աշխատանքները հիմնականում բանավոր են իրականացվում: Դասախոսները տրամադրում են ուսանողներին այն հիմնական նյութերը (մրցաշարերի տեսանյութեր), որոնք պետք է վերլուծվեն, դրա համար կիրառվում են մեդիա խմբերը (whatsapp, viber):

Մատյանների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ուսանողների առաջընթացը գրեթե չի գրանցվում, առկա են դեպքեր, երբ միայն մեկ արդյունքի գնահատմամբ որոշվել է ամբողջ մոդուլի ամփոփիչ գնահատականը: Հագուստի մոդելավորում ՄԿԾ-ում իրականացվում են նաև լաբորատոր աշխատանքներ, երբ ուսանողները իրականացնում են հագուստի մասնիկների՝ գրպան, օձիք, թևատեղի և այլն, մշակումներ: Այսպիսի աշխատանքները չեն գնահատվում:

Պրակտիկաները գնահատվում են անմիջապես ուսանողների պրակտիկայի օրագրերի հիման վրա՝ մեթոդիստի կողմից ամբիոնի վարիչի, ուսումնական մասի ներկայությամբ: Պրակտիկան գնահատվում է 10 բալային սանդղակով, հաշվի են առնում՝ ուսանողի կողմից կազմված հաշվետվության որակը և բովանդակությունը, ուսանողի ցուցաբերած ակտիվությունը, ինքնուրույնությունը և ղեկավարի կողմից ներկայացված բնութագիրը: «Հաշվապահական հաշվառում» արտադրական պրակտիկայի դիտարկումից պարզ դարձավ, որ 3-րդ կուրսի ուսանողները (15 ուսանող) հաճախում են մեկ ընկերություն («Վակումային էներգետիկ վառարաններ»), որտեղ պրակտիկան անցկացվում է մեկ գործող հաշվապահի մոտ: «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» պրակտիկայի դիտարկումը ցույց տվեց, որ ուսանող-պրակտիկանտները հնարավորություն ունեին ինքնուրույն դասը վարելու հանրակրթական դպրոցում, դասը վարող ուսանողներին աջակցում էին մյուս ուսանողները, հիմնականում դասը մեթոդապես ճիշտ էր կազմակերպված, սակայն պրակտիկայի օրագրում դասի վերլուծությունը ուներ նկարագրական բնույթ, առանց ուսանողի կողմից կիրառված մեթոդների և միջոցների վերաբերյալ վերլուծությունների:

Քոլեջն առաջնորդվում է «Պետական ամփոփիչ ստուգման կազմակերպման և անցկացման» կարգով: «Հաշվապահական հաշվառում» և «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» ՄԿԾ-ներում ուսանողները հանձնում են պետական ամփոփիչ ատեստավորման քննություններ: Հարցատոմսերը բաղկացած են 3 հարցից, որից մեկը ենթադրում է գործնական կարողությունների ստուգում: Ֆիզիկական կուլտուրա և սպորտ ՄԿԾ-ի քննություններն անցկացվում են մարզադահլիճում, գործնական հարցը (մասնագիտական հմտությունները) ուսանողները անմիջապես ցուցադրում են: Ամփոփիչ ատեստավորման քննական հարցատոմսերի դիտարկումը ցույց տվեց, որ հարցերը ոչ միշտ են պատշաճ ներկայացված, օրինակ որպես հարց ներկայացված է՝ «թիմեր», ինչպես նաև հարցատոմսերն իրենց բարդության կշռով տարբերվում են, իսկ գործնական հարցը նույնն է բոլորի համար: «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» ՄԿԾ-ում ամփոփիչ ատեստավորումը կատարվում է դիպլոմային աշխատանքների իրականացմամբ: Պետք է նշել, որ դիպլոմային աշխատանքների կատարման և գնահատման հստակեցված չափանիշներ առկա չէ, գնահատումն իրականցվում է դասախոսական կազմի ունեցած փորձի հիման վրա: Դիպլոմային աշխատանքների թեմաներն առաջադրվում են ամբիոնի կողմից: Աշխատանքների դիտարկումը ցույց տվեց, որ ուսանողները հիմնականում ներկայացնում են

տեխնոլոգիական մաս՝ մոդելի ընտրություն և հիմնավորում, արտաքին տեսքի նկարագիր, ավարտական աշխատանքի էսքիզ (նկար), դետալների դասակարգում, անվտանգության կանոնների պահպանում և այլն: Աշխատանքներում բացակայում են վերլուծությունները ընտրված գործվածքի վերաբերյալ (կտորի տեսակը՝ սինթետիկ, բաբմակ և այլն), տեղեկատվությունը և ընտրության հիմնավորումը, որը տեխնոլոգիական գործընթացի կարևոր բաղկացուցիչներից մեկն է: Ներածության հատվածում բացակայում է դիպլոմային աշխատանքի կատարման մեթոդաբանությունը, իսկ ամփոփիչ եզրակացություններում արտահայտված չէ ուսանողի ինքնուրույն մտածողությունը և եզրահանգումը: Պետք է միևնույն ժամանակ փաստել, որ դիպլոմային աշխատաքի մաս հանդիսացող պատրաստի մոդելները ունեն մի շարք տեխնիկական խնդիրներ, օրինակ ուսագոտիների անհավասարաչափություն, կարի որակ, թելի գույնի և գործվածքի գույնի համատեղում և այլն:

Քոլեջն ունի մշակված «Ակադեմիական ազնվության կարգ», որը սահմանում է ակդեմիական անազնվության դեպքերը, պետք է փաստել, որ կարգը պրակտիկայում ամբողջովին ներդրված չէ, օրինակ՝ դիպլոմային և կուրսային աշխատանքներում ներկայացվում է գրականության ցանկ, սակայն բնագիր աղբյուրներին տրվող հղումները աշխատանքներում բացակայում են, տեսական վերլուծություններ առկա չեն: Դիպլոմային աշխատանքները արտաքին գրախոսում չեն անցնում, կարծիք է տվում միայն տվյալ աշխատանքը ղեկավարող դասախոսի կողմից:

Քոլեջի կրթական ծրագրերը նույնական են ՀՀ այլ քոլեջների հետ այնքանով, որ բոլորը կազմված են ՀՀ պետական չափորոշիչների հիման վրա: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը արտերկրի կամ տեղական նմանատիպ կրթական ծրագրեր իրականացնող քոլեջների հետ համեմատականներ չի իրականացրել:

ՄԿԾ-ների մշտադիտարկման գործող համակարգային և կանոնակարգված մեխանիզմներ քոլեջում ներդրված չեն: Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջի համար հիմնական մշտադիտարկման գործիք է դասալսումը, դասալսումների արդյունքների ուսումասիրությունը ցույց տվեց, որ դրանցում առկա չեն վերլուծություններ դասի վարման վերաբերյալ, ինչպես նաև բացակայում են առաջարկությունները դասի մեթոդական և բովանդակային բարելավման համար:
Պետք է նշել, որ տարբեր ծրագրերում առկա հատվածային լավարկումների հիմքում ընկած են արտաքին շահակիցների արձագանքները («Հաշվապահական հաշվառում» մասնագիտության մեջ ներդրվեց ՀԾ ծրագրի ներդրումը), միևնույն ժամանակ գործընթացները ամբիոնների պլանավորման առարկա չեն հանդիսանում, այլ հիմնված են իրավիճակային դեպքերի վրա:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ԱՊՔ-ի իրականացրած կրթական ծրագրերը նպաստում են տարածաշրջանի աշխատաշուկայի կարիքների բավարարմանը: Հատկանշական է, որ քոլեջը «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» ՄԿԾ-ն փորձել է համապատասխանեցնել ԱՀՈՒ ձևաչափին, որը առաջընթաց քայլ է քոլեջի համար, այնուամենայնիվ գործատուների և ոլորտի ներկայացուցիչների հետ հաղորդակցման պակասը հանգեցրել է ՄԿԾ-ի ոչ արդյունավետ պլանավորմանը: Փորձագիտական խումբը նաև քոլեջի ուշադրությունն է հրավիրում «ֆիզիկական կուլտուրա և

սպորտ» կրթական ծրագրի վերանայման ուղղությամբ, քանի որ ներկայումս կիրառվող ՊԿՉ-ն լիարժեք չի ապահովում տրամադրվող որակավորման՝ «դասավանդող ֆիզկուլտուրայի», բովանդակությունը: Դրական է, որ քոլեջը նույնպես գիտակցում է նշված խնդիրը և փորձել է բարձրացնել ՊԿՉ-ի վերանայման հարցը, փորձագիտական խումբը խրախուսում է քոլեջին դրսևորելու նախաձեռնողականություն ներքին ռեսուրսներով ՄԿԾ-ն վերանայելու ուղղությամբ:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԻՎ շրջանակներում կատարվել է ուսումնառության ակնկալվող արդյունքների, դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդների համապատասխանեցման փորձ, որը դրական նախադրյալ է հանդիսանում հետագայում ուսումնառության արդյունքների ընդհանրացման /խոշորացման/ և հստակ կրթական վերջնարդյունքների սահմանման համար: Կարևոր է ընդգծել փաստաթղթային հենքի և գործընթացների համահնչեցման անհրաժեշտությունը (օրինակ պրակտիկայի ծրագրեր ուսումնական պլանների հետ համապատասխանեցման խնդիրը), որը կնպաստի ՄԿԾ-ի պլանավորում-իրականացում կապի ամրապնդմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում դասի պլանավորման փաստաթղթերի (ուսումնառության պլան, գնահատման թերթիկ) առկայությունը քոլեջում, սակայն ինստիտուցիոնալ մակարդակում բացակայում է փաստաթղթերի կիրառության ձևի և բովանդակության միասնականությունը, որը մի կողմից խոչընդոտում է մոդուլի շրջանակներում ուսանողների առաջընթացի ապահովումը, մյուս կողմից այսպիսի մոտեցումները բացասաբար են անդրադառնում գիտելիքների կարողությունների և հմտությունների գնահատման գործընթացների արժանահավատության վրա: Վերոնշյալը շեշտադրում է դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականության մշակման և ներդրման անհրաժեշտությունը ուսումնառության գործընթացում, որը թույլ կտա դասավանդման մեթոդները փոխկապակցել ուսումնառության նյութի, ուսանողներին տրվող առաջադրանքների և ակնկալվող արդյունքների հետ: Դասավանդման մեթոդների և ուսումնառության նյութերի արդիականացումը, համալրելով ժամանակակից գրականությամբ նույնպես օրակարգային խնդիր է քոլեջի համար, քանի որ վերջիններս ուղղակիորեն անդրադառնում են ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությյունների ձևավորման վրա:

Դրական է, որ քոլեջում գործող «Սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ընթացիկ ստուգման և գնահատման կարգը» մանրամասն պարզաբանում է 1-ից մինչև 10 գնահատականի տարբերակման չափանիշները, սակայն այդ չափանիշները տեղայնացված չեն առարկաների և մոդուլների գնահատման գործընթացում, միևնույն ժամանակ փորձագիտական խմբի համար մտահոգիչ է, որ հաճախ գնահատման ձևերի, միջոցների և մեթոդների ընտրությունը թույլ չի տալիս հստակ չափելի դարձնել ակնկալվող վերջնարդյունքների ձեռքբերման աստիճանը, երբեմն դրանք չեն համապատասխանում գնահատման նպատակին: Գնահատման բաղադրիչների հստակեցումը ինստիտուցիոնալ մակարդակում թույլ կտա իրականացնել գիտելիքների կարողությունների և հմտությունների արժանահավատ գնահատում:

Դրական է, որ քոլեջը մշակել է «Ակադեմիական ազնվության կարգ», այնուամենայնիվ ինստիտուցիոնալ մակարդակում առկա չեն հստակ պատկերացումներ ակադեմիական ազնվության պահպանման վերաբերյալ՝ թե՛ դասախոսների, թե՛ ուսանողների մոտ, որը արտահայտվում է օրինակ դիպլոմային աշխատանքների կատարման ընթացքում ուսումնասիրված աղբյուրներին տրված հղումների բացակայությամբ: Կարգի գործածությանը խոչընդոտում է նաև կուրսային, դիպլոմային ինչպես նաև այլ անհատական աշխատանքների կամ ռեֆերատների կատարման համար սահմանված ներքոլեջային չափանիշների բացակայությունը: Վերոնշյալ չափանիշների սահմանումը կարևոր է նաև ուսումնառության և հետազոտության փոխկապակցման տեսանկյունից, ներկայումս վերլուծական և ստեղծագործական կարողություններ ձևավորող հանձնարարականները պայմանավորված են տվյալ առարկայի առանձնահատկությամբ և դասախոսի հայեցողությամբ, այսուհանդերձ հեռանկարային զարգացման համատեքստում ինստիտուցիոնալ մեխանիզմների բացակայությունը կարող է վտանգել ՈԱԾ-ի 5-րդ մակարդակի հետ ՄԿԾ-ների համահնչեցումը:

Փորձագիտական խմբի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ իրականացվող դասալսումները արդյունավետ չեն որպես ՄԿԾ մշտադիտարկման մեխանիզմ՝ ունեն ֆորմալ նկարագրական բնույթ և չեն արտահայտում տվյալ դասի մանկավարժական վերլուծությունը, դասախոսի մանկավարժական վարպետությունը և բարելավման ենթակա կողմերը, միևնույն ժամանակ փոխլրացնող մշտադիտարկման մեխանիզմները ներդրման փուլում են: Այսուհանդերձ, փորձագիտական խումբը ընդգծում է, որ ներքին և արտաքին շահակիցների հետ հետադարձ կապի թույլ մեխանիզմները կամ դրանց բացակայությունը խոչընդոտում են որակի կառավարման սկզբունքով ՄԿԾ-ների բարելավմանը:

ՄԿԾ վերանայման և բարելավման համար կարևոր է նաև բենչմարքինգի/համեմատական վերլուծության գործիքակազմի ներդրումը, որը կընդլայնի համանման կրթական ծրագրեր իրականացնող տեղական և արտասահմանյան ուսումնական հաստատությունների հետ համագործակցության և փորձի փոխանակման ԱՊՔ հնարավորությունները:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ կրթական ծրագրերի մշակման և վերանայման գործընթացներում թույլ է արտահայտված աշխատաշուկայի և ոլորտային այլ ներկայացուցիչների ներգրավվածությունը, իրականացվող բարելավումները հիմնված չեն հավաքագրված օբյեկտիվ տվյալների վրա, ուսումնառության արդյունք-դասավանդման և գնահատման մեթոդներ կապը երբեմն չեն նպաստում սահմանված արդյունքների ձեռքբերմանը, դիպլոմային աշխատանքներում բացակայում են կատարման չափանիշները, ինչպես նաև թույլ է արտահայտված ուսանողի ինքնուրույնությունը, ուսանողներին ներկայացվող առաջադրանքները ինստիտուցիոնալ մակարդակով վերլուծական, ստեղծագործական մտածողություն ձևավորող չեն, առկա գնահատման կանոնակարգը տեղայնացված չէ առանձին մոդուլային ծրագրերում (բացակայում են գնահատման բաղադրիչները), առկա չէ ակադեմիական ազնվության պահպանման, և ՄԿԾ-ների բենչմարքինգի մեխանիզմներ, առկա չեն ՄԿԾ-ների մշտադիտարկման գործող և համակարգային մեխանիզմներ, փորձագիտական խումբը գտնում է,

որ Արթիկի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Արթիկի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր: ԱՊՔ-ն ուսանողների հավաքագրման նպատակով իրականացնում է մի շարք գործընթացներ, կազմակերպվում են այցեր տարածաշրջանի տարբեր դպրոցներ, աշակերտներին բաժանվում են տեղեկատվական թռուցիկներ, որոնցում առկա են տեղեկատվություն քոլեջի մասնագիտությունների, ուսման տևողության, ընդունելության պահանջների վերաբերյալ: Այցերն իրականացվում են՝ ըստ նախապես կազմված ժամանակացույցի: Դիմորդների Ներգրավման մեխանիզմներից է նաև մասնագիտական կողմնորոշմանն նպատակով իրականացված բաց դռների օրերը քոլեջում: ԱՊՔ-ի ուսանողները կարիերայի կենտրոնի պատասխանատուի հետ մասնակցում են աշխատանքային տոնավաճառների, որոնց ընթացքում ներկայացվում են ուսանողների ձեռքի աշխատանքները «Դիզայն» և «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» ՄԿԾ-ների շրջանակներում, որը նույնպես նպաստում է դիմորդների ներհոսքին:

Ընդունելության վերաբերյալ տեղեկատվությունը տարածվում է քոլեջի պաշտոնական կայքէջով և սոցիալական հարթակներով: Ըստ քոլեջի՝ դիմորդների ներգրավվման առավել արդյունավետ մեխանիզմներն են սոցիալական հարթակները և շրջանավարտների արձագանքները տարածաշրջանում քոլեջի վերաբերյալ:

Քոլեջում ընդունելությունը կազմակերպվում է ՀՀ կրթության և գիտության նախարարի ամենամյա հրամանով հաստատված «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների ընդունելության» կարգի համաձայն: 2020թ. -ից ընդունելությունն իրականացվում է առցանց՝ dimord.emis.am կայքի միջոցով: Ընդունելությունն իրականացվում է առանց ընդունելության քննությունների, մրցութային հիմունքներով, բացառությամբ՝ «Դիզայն» և «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» ՄԿԾ-ների: «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» ՄԿԾ-ի շրջանակներում դիմորդները հանձնում են քննություն «Ընդհանուր ֆիզիկական պատրաստությունից», իսկ «Դիզայն» մասնագիտության շրջանակներում նախատեսված է քննություն «Գունանկար» և «Կոմպոզիցիա» առարկաներից:

Ընդունելության տեղերի և ընդունված ուսանողների ցուցանիշների համեմատությունը ցույց է տալիս, որ ընդունելության տեղերը հնարավորինս լրացվում են, հիմնականում թափուր տեղեր են առաջանում վճարովի ուսուցման համակարգում: Վերջին տարիներին նկատվում է ընդունելության ցուցանիշների աճ՝ 2019-2020 ուստարում ընդունվել է 81 ուսանող, 2020-2021 ուստարում՝ 92 ուսանող, 2021-2022 ուստարում՝ 115ուսանող, իսկ 2022-2023 ուստարում՝ 121 ուսանող:

Համաձայն ինքնավերլուծության՝ վերջին 3 տարվա ընթացքում քոլեջից դուրս մնացող ուսանողները կազմում են 6,7-9,1%: Ուսանողների դուրս մնալը մեծամասամբ պայմանավորված է անհարգելի բացակայություններով, վերջինիս պատճառով ուսանողների հեռացումները կանխարգելելու նպատակով իրականացվում է վերահսկողություն կուրսղեկների կողմից, քոլեջի կողմից պահպանվում է մշտական կապ ուսանողների ծնողների հետ:

Ուսանողների կրթական կարիքների վերհանման հիմնական մեխանիզմը կուրսղեկների ինստիտուտն է: Սահմանված են կուրսղեկի ժամեր, որոնք կազմակերպվում են ամեն երկուշաբթի օրերին: Կուրսղեկի ժամերն ուղղված են սովորողների առաջադիմության, կարգապահության, ուսումնական հաստատության ներքին կարգապահական կանոնների իրազեկման, ներքոլեջային և արտաքոլեջային տարբեր միջոցառումներին ուսանողների մասնակցության ապահովմանը: Ուսանողները հիմնականում դիմում են կուրսղեկներին, երբ անհրաժեշտություն ունեն դասից բացակայելու: Պետք է նշել, որ կուրսղեկների աշխատանքը մտնում է դասախոսի ընդհանուր բեռնվածության մեջ: Ուսանողների որոշ կարիքներ վեր են հանվում նաև Ուսանողական խորհրդի միջոցով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈՒԽ-ի միջնորդությամբ բարձրաձայնվել և լուծվել են ուսանողների որոշ խնդիրներ կապված ուսման վարձերի վճարման հետ. նրանց միջնորդությամբ վարձերի վճարման ժամկետները երկարաձգվել են:

Ինչ վերաբերում է լրացուցիչ խորհրդատվությունների իրականացմանը, ապա քոլեջը կազմակերպում է լրացուցիչ մասնագիտական խորհրդատվություններ քննաշրջանի շեմին և ամփոփիչ ատեստավորումից առաջ, որոնց մասին ուսանողները տեղեկանում են դասախոսներից: Առկա են խորհրդատվությունների տրամադրման ժամանակացույցներ, որտեղ նշված է տեղեկատվություն պետական որակավորման քննությունների օրերի և նախատեսված խորհրդատվությունների օրերի վերաբերյալ: ԱՊՔ-ում ուսանողների համար նախատեսված չէ լրացուցիչ պարապմունքների հնարավորություն. լրացուցիչ մասնագիտական պարապմունքներ չեն պլանավորվում և չեն իրականացվում:

Ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց սահմանված չէ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները ազատ են դիմելու վարչական անձնակազմին ցանկացած պահի: Ըստ ինքնավելուծության՝ ուսանողների 70%-ը տեղեկացված է վարչական ծառայությունների մասին, իսկ 60-%-ն ընդգրկված է այդ ծառայություններում, որից 60%-ն էլ գոհ է իրեն մատուցված ծառայություններից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այս տվյալները հավաքագրվել են բանվոր հարցումների հիման վրա:

Քոլեջում շրջանավարտների հետ հետադարձ կապ և հաղորդակցում ապահովելը Կարիերայի կենտրոնի պատասխանատվությունն է: Կենտրոնի աշխատանքներն իրականացվում են տնօրենի կողմից հաստատված աշխատանքային պլանին համաձայն, որով պլանավորվում է ընդլայնել քոլեջի ուսանողների վերաբերյալ բազան, կազմակերպել տարատեսակ միջոցառումներ շրջանավարտների մասնագիտական հետաքրքրություններն ու հմտությունները բացահայտելու համար, հանդիպումներ գործատուների հետ, ինչպես նաև ուսումնասիրել աշխատաշուկան, կատարել համապատասխան վերլուծություններ: Պետք է նշել, որ պլանում առկա չէ հստակ ժամանակացույց, միջոցառումների պարբերականություն և թեմա, օրինակ՝ քանի անգամ է պլանավորվում հանդիպել գործատուների հետ և ինչ թեմաներ են քննարկվելու: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ կենտրոնի կողմից կազմակերպվում են մասնագիտական կողմնորոշման դասընթացներ, մշակութային միջոցառումներ, այցեր դպրոցներ և այլն:

Համաձայն քոլեջի 2021-2022թթ. ներկայացրած տվյալների՝ ուսանողների 19%-ը կրթությունը շարունակում է բուհերում, 15,5%-ն աշխատում է իր մասնագիտությամբ, 29,3 %-ն աշխատում է ոչ իր մասնագիտությամբ, իսկ 20,5%-ը չի աշխատում, մնացյալ հատվածն էլ իր գործունեությունը ՀՀ-ից դուրս է իրականացնում: Պետք է նկատել, որ նախորդ տարվա համեմատ (9%) նկատվում է իրենց մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների աճ: Շրջանավարտների բազայի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այն իր մեջ համակարգված տվյալներ չի պարունակում, շրջանավարտներն առանձնացված չեն ըստ տարիների, կարգավիճակի:

Վերջին տարիներին «Դիզայն» և «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» ՄԿԾ-ներում որպես հետազոտական աշխատանքներ իրականացվում են դիպլոմային և կուրսային աշխատանքներ: «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» ՄԿԾ-ում ուսանողներն իրականացնում են վերլուծական աշխատանքներ մրցութային խաղերի վերլուծությունների տեսքով, իսկ «Հաշվապահական հաշվառում» ՄԿԾ-ն առավելապես կենտրոնացած է գործնական խնդիրների լուծման վրա, օրինակ՝ հաշվեկշռի կազմում կամ այլ գործառնությունների ձևակերպում:

Քոլեջում ուսանողների իրավունքներն ու պարտականություններն ամրագրված են ՀՀ օրենսդրությամբ, Քոլեջի կանոնադրությամբ, Քոլեջի և ուսանողների միջև կնքված պայմանագրում: Ուսանողական խորհուրդը ուսանողների իրավունքների պաշտպանության համար հիմնական պատասխանատու մարմինն է: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն իրենց խնդիրներով առավել շատ դիմում են կուրսղեկներին և տվյալ դասընթացի դասախոսին: Կառույցն առավել շատ կենտրոնացած է տարատեսակ մշակութային միջոցառումների կազմակերպմամբ, օրինակ՝ Սայաթ-Նովային նվիրված:

Համաձայն քոլեջի կազմակերպական կառուցվածքի՝ Ուսանողական խորհուրդը հաշվետու է դաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալին:

Քոլեջում կրթական, խորհրդատվական և տրամադրված մնացյալ ծառայությունների արդյունավետությունը չի գնահատվում, քանի որ մեխանիզմներ ներդրված չեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Որակի ներքին ապահովման կենտրոնի կողմից այս նպատակով իրականացվող հարցումները պլանավորման փուլում են:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԱՊՔ-ում գործում է ուսանողների հավաքագրման կանոնակարգված գործընթաց, ուսանողների ընտրության և ընդունելության հստակ մեխանիզմներ, որոնք հանգեցրել են վերջին տարիներին ուսանողների թվաքանակի որոշակի աճին:

Հաշվի առնելով ուսանողների տարիքային առանձնահատկությունները՝ փորձագիտական խումբը կարևոր է համարում կուրսղեկների դերը ուսանողների կրթական կարիքների բացահայտման գործում: Դրական է, որ քոլեջում կազմակերպվում և իրականացվում են խորհրդատվություններ, որոնք նպաստում են ուսանողների կողմից քննական շրջանի առավել դյուրին հաղթահարմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ ուսանողների համար հավելյալ լրացուցիչ պարապմունքները, որոնք կարող են նաև արտահայտվել ՄԿԾ-ների նախասիրական ժամերի ձևով, կնպաստեն ուսանողների մոտիվացիայի բարձրացմանը և մասնագիտական կարողությունների զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում ուսանողների վարչական անձնակազմին դիմելու լայն հնարավորությունները՝ օժանդակություն և ուղղորդում ստանալու նպատակով, սակայն որոշակի օրակարգերի մշակումը, օրինակ՝ ամեն կիսամյակ 2 հանդիպում տնօրենի հետ (նախապես որոշված թեմայով), կարող է նպաստել ուսանողների կարիքների բարձրաձայնմանը:

Դրական է ուսանողների կարիերային ուղղված քոլեջի աշխատանքը, որը նպաստել է իրենց մասնագիտությամբ աշխատող ուսանողների տոկոսային հարաբերության բարձրացմանը, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ կենտրոնի աշխատանքները կարող են առավել լավ պլանավորված լինել՝ օրինակ՝ տարեկան քանի գործատուի հետ հանդիպել, ինչպիսի հարցեր քննարկել և ինչպիսի արդյունքներ ստանալ կամ աշխատաշուկան ինչպես ուսումնասիրել, ինչ ժամանակահատվածում և այլն: Այս տեսանկյունից առավել նպատակահարմար կլինի նաև կենտրոնի համար աշխատանքի գնահատման արդյունավետության ցուցանիշների սահմանումը, օրինակ՝ շրջանավարտների քանի տոկոսը պետք է կառույցի միջոցով կարողանա աշխատանք գտնել և այլն, հստակ սահմանված ցուցիչները կնպաստեն կենտրոնի առավել թիրախային աշխատանքին և իրենց մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների թվի աճին:

ԱՊՔ-ում որոշակի գործընթացներ իրականացվում են ուսանողներին հետազոտական աշխատանքներում ներգրավելու ուղղությամբ, սակայն մտահոգիչ է այն փաստը, որ հետազոտական և վերլուծական առաջադրանքների տրամադրումը ուսանողներին դեռևս ինստիտուցիոնալ պահանջ չէ:

Գովելի է այն փաստը, որ քոլեջում գործում է Ուսանողական խորհուրդ, որը նպաստում է ուսանողական միջավայրի ձևավորմանը, սակայն կառույցն իրեն առաջնահերթ չի դիտարկում որպես ուսանողների իրավունքների պաշտպանության մարմին, որը կարող է հանգեցնել կառույցի ձևավորման հիմնական նպատակից շեղմանը:

Մտահոգիչ է այն փաստը, որ ՄՈՒՀ-ում չեն գործում ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ, որոնք խոչընդոտում են օբյեկտիվ տվյալների ստացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում գործում են ուսանողների հավաքագրման կանոնակարգված գործընթաց, գրանցվել է ընդունելության աճ, ուսանողների կարիքների վերհանման նպատակով ներդրված է կուրսղեկների ինստիտուտը, առկա են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ, վերջին տարում նկատելի է իրենց մասնագիտությամբ աշխատող շրջանավարտների տոկոսային աճ, գործում է ուսանողների իրավունքները ներկայացնող կառույց, ընդհանուր առմամբ առկա է ուսանողական միջավայր, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊՔ-ն բավարարում է 4-րդ չափանիշի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 4-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր: Ըստ Արթիկի պետական քոլեջի 2020-2025թթ.-ի ԶԾ-ի՝ Քոլեջն իր առջև նպատակադրել է ունենալ որակյալ և պատրաստված կադրային ներուժ: Սահմանված նպատակի իրագործման համար ԶԾ-ում սահմանվել են հետևյալ քայլերը՝ դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընդունման և ազատման հանձնաժողովի ստեղծում, աշխատանքի ընդունման մրցութային համակարգի ներդրում: 2021թ.-ից ԱՊՔ-ի դասախոսական համակազմի ընտրությունն իրականացվում է՝ ըստ «Մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի կազմակերպման և անցկացման» կարգի: Վերջինիս համաձայն՝ մանկավարժական աշխատողի թափուր տեղի համար անցկացվում է բանավոր քննություն, հարցաշարերը պետք է ներառեն հարցեր ինչպես դասավանդվող մոդուլների/առարկաների/, այնպես էլ մանկավարժական գործընթացի կազմակերպման վերաբերյալ: Հարցատոմսերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դրանցում եղած հարցերը տեսական բնույթի են, երբեմն էլ ձևակերպումները՝ ոչ հստակ, օրինակ ներկայացված են այսպես՝ «ուսումնադաստիարակչական գործընթացի գործառույթ է…», «հեռավար կրթության ժամանակ ուսուցիչը կարող է…», պետք է նշել, որ դասավանդվող մոդուլներից մասնագիտական հարցեր ներառված չեն: Քոլեջում առկա չէ հարցաշարերի և հարցատոմսերի կազմման հստակ ընթացակարգ, որտեղ ներկայացված կլինեն, թե հարցատոմսերն ինչպես և ինչ բաղադրիչներով պետք է կազմվեն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ մրցութային կարգով քոլեջ ընդունվել է միայն մեկ դասախոս և տվյալ դասախոսը եղել է միակ հավակնորդը: Մրցույթի անցկացման ընթացքը արձանագրված չէ:

2021թ.-ից մինչ օրս ԱՊՔ ընդունվել է 21 դասախոս, որոնց մեծամասնությունը հրավիրվել են Քոլեջ ժամավճարային հիմունքներով (ժամավճարային հիմունքներով հրավիրված դասախոսների համար Քոլեջը մրցույթ չի հայտարարում), իսկ մյուս դասախոսներն անմիջապես ընդունվել են աշխատանքի մասնագետի սղության և դասախոսների հոսունության պատճառով: Ուսումնաօժանդակ կազմը ընտրվում է ոչ մրցութային կարգով՝ հաշվի առնելով կրթությունը, աշխատանքային ստաժը և համապատասխանությունը պաշտոնի նկարագրին:

ԱՊՔ-ն իր ԶԾ-ում սահմանել է մշակել յուրաքանչյուր մասնագիտական կրթական ծրագրի արդյունավետ իրականացման համար դասախոսական կազմին ներկայացվող պահանջներ և չափանիշներ: Ներկայումս դասախոսական կազմի առջև դրված հիմնական պահանջները սահմանվում են ՊԿՉ-ներով, ըստ մասնագիտական առանձնահատկությունների, պահանջներ մշակելու ուղղությամբ դեռևս քայլեր չեն իրականացվել:

Որպես դասախոսների գնահատման հիմնական մեխանիզմներ՝ քոլեջը դիտարկում է դասալսումները, դասախոսների փաթեթների ուսումնասիրությունը, ուսանողների կողմից իրականացվող հարցումները և քոլեջի կողմից դասավանդման դրվածքի ուսումնասիրությունները: 2021թ. Քոլեջը մշակել է «Դասալսումների անցկացման և արդյունքների վերլուծության» ընթացակարգ, վերջինիս իրականացման համար սահմանված է հստակ ժամանակացույց: Դասալսումներ իրականացնում են դասախոսները, ամբիոնի վարիչները, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը և կրթության որակի ապահովման պատասխանատուն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը տրամադրում է նաև հնարավորություն դասախոսներին ազատ գրաֆիկով դասալսում իրականացնել ցանկացած մեկ այլ դասախոսի մոտ, որը միտված է փորձի փոխանակմանը: Դասալսման ձևաթերթերի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ կազմված արձանագրությունները նկարագրական են, հիմնականում առկա չեն դասի վերլուծություններ և նախանշված չեն դասախոսի բարելավման ենթակա կողմերը: Դասալսողները խուսափում են գրավոր քննադատական դիտարկումներ իրականացնել՝ պատճառաբանելով, որ գործընկերներին չեն ցանկանում դնել «վատ իրավիճակում»: Դասալսման արդյունքները ներկայացվում են բանավոր՝ անհատական ձևով, դիտարկումների հիման վրա դասախոսները վերանայում են դասավանդման մեթոդները, ինչպես նաև՝ իրենց վերաբերմունքն ուսանողների հանդեպ և այլն: Դասախոսի գնահատման մյուս մեխանիզմը դասախոսների փաթեթների ուսումնասիրությունն է ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի կողմից, ուսումնասիրություններն իրականացվում են պատահականության սկզբունքով, դիտարկվում են փաթեթներում ուսումնառության նյութերի, համապատասխան առաջադրանքների առկայությունը:

2022թ. մշակվել է նաև «Ուսանողի կողմից դասախոսական անձնակազմի և դասավանդման որակի արդյունավետության գնահատման» կանոնակարգը: Համաձայն կանոնակարգի՝ յուրաքանչյուր կիսամյակի ավարտին Քոլեջի Որակի ներքին ապահովման կենտրոնի կողմից կարող է իրականացվել ուսանողական հարցումներ դասախոսի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հարցումները մեկ անգամ են իրականացվել, այն էլ հատվածային, արդյունքները վերլուծված չեն: Պետք է նաև նշել, որ քոլեջի կողմից դեռևս չի նախանշվել, թե վերլուծությունների

արդյունքները ինչպես են կիրառվելու: Դասախոսի ինքնագնահատման մեխանիզմ ծառայում են նաև դասախոսների ուսումնառության պլաններում առանձնացված «դասի առանցքային կետերի ամփոփում» բաժինը, որտեղ դասախոսները կարող են նշել դասի ընթացքում առաջացած խնդիրները և հետագա բարելավման կողմերը: Պլանների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ գործիքը դասախոսական կազմի կողմից գրեթե չի կիրառվում, այդ բաժիններում նշումներ առկա չեն:

Համաձայն ԶԾ-ի որակյալ կադրային ներուժ նպատակի (նպատակ 2)՝ Քոլեջը խնդիր է առաջադրել դասավանդողների կատարելագործման նպատակով մշակել և կիրառել դասախոսների մասնագիտական վերապատրաստման մեխանիզմներ: Դասախոսական կազմը մասնակցում է Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի (ՄԿՈՒԶԱԿ) կողմից կազմակերպված մեթոդական վերապատրաստումների (2023 թվականին մասնակցել է 7 դասախոս), վերջին տարիներին ՄՈՒՀ-ի դասախոսները և վարչական աշխատակիցները վերապատրաստվել են նաև ՈԱԱԿ-ի, «Save the children» կազմակերպությունների, «People in need», «Ինթրա հոգեբանական ակումբ», «Առողջ կանայք, առողջ հասարակություն» ՀԿ-ների կողմից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսների կարիքները վեր են հանվում բանավոր զրույցների արդյունքում: Ըստ շահակիցների հետ հանդիպումների՝ դասախոսական և վարչական անձնակազմն ունի մասնագիտական և տեղեկատվական տեխնոլոգիաների վերապատրաստումների կարիք: Քոլեջը վերջինիս ուղղությամբ պլանավորում է կազմակերպել ներքին վերապատրաստումներ: ԱՊՔ-ն, ելնելով ֆինանսական սահմանափակ հնարավորություններից, տարեկան նախահաշվի պլանավորման մեջ չի հատկացնում անձնակազմի մասնագիտական վերապատրաստումների համար ֆինանսական միջոցներ:

Դասախոսական կազմի մասնագիտական կատարելագործման նպատակով, ամբիոնի նիստերում դասախոսները հանդես են գալիս մեթոդական զեկուցումներով՝ կապված դասավանդման մեթոդների կատարելագործման հետ:

Քոլեջում կրթական ծրագրերի իրականացման համար ներգրավված են թվով 51 դասախոսներ և 26 հաստիքային աշխատողներ: Դասախոսներից 31-ը հիմնական աշխատակիցներ են, 20-ը՝ համատեղությամբ, որից 5-ը պրակտիկ ոլորտի մասնագետներ են (1 դասախոս ընդգրկված է «Հաշվապահական հաշվառում», 2-ը՝ «Հաշվողական տեխնիկա և ավտոմատացված համակարգեր» ՄԿԾ-ում, 1-ը «Ֆիզիկական կուլտուրա և Սպորտ» ՄԿԾ-ում): Դասախոսական ամբողջ կազմն ունի բարձրագույն կրթություն, իսկ մեկը՝ գիտությունների թեկնածուի աստիճան:

Քոլեջի դասախոսական անձնակազմի 48.9%-ը ունի 15 և ավելի տարիների աշխատանքային փորձ, կազմի միջին տարիքը 47 տարեկան է, միջին ստաժը 19-20 տարի (ընդհանուր): Համաձայն ներկայացված տվյալների՝ վերջին 3 տարիներին Քոլեջի դասախոսական անձնակազմը համալրվել է 21 երիտասարդ դասախոսներով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը վարում է կադրերի երիտասարդացման քաղաքականություն՝ վերջին տարիներին նախապատվություն տալով պրակտիկ ոլորտի աշխատողների ներգրավմանը: Միևնույն ժամանակ քոլեջը փաստում է

երիտասարդ կադրերի հոսունության խնդիրը, ինչն էլ պայմանավորված է ցածր վարձատրությամբ, ինչպես նաև երիտասարդների դեպի մայրաքաղաք տեղափոխությունների հետ, այս միտումն առավել նկատելի է «Հաշվողական տեխնիկա և ավտոմատացված համակարգեր» ՄԿԾ-ում:

Համաձայն ԶԾ-ի՝ նպատակ 2, խնդիր 2.1-ի՝ Քոլեջը սահմանել է խրախուսել դասախոսական կազմի ինքնակրթությունը, ներդնել դասախոսական կազմի աշխատանքի վարձատրության տարբերակման մեխանիզմ: 2022 թվականին մշակվել է «Աշխատակիցների պարգևատրման, խրախուսման և առաջխաղացման կարգը»: Ըստ կարգի՝ խրախուսման ձևերն են՝ շնորհակալության հայտարարում, դրամական պարգևատրում, լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում, կարիերայի առաջխաղացում և այլն: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի ֆինանսական սահմանափակ հնարավորություններից ելնելով՝ դրամական պարգևատրումներ չեն եղել: Խրախուսումները հիմնականում բարոյական են (գովեստի խոսքեր) կամ հնարավոր է կարիերայի առաջխաղացումը, օրինակ դասախոսից՝ ամբիոնի վարիչ կամ վարչական այլ աշխատանք:

Սկսնակ դասախոսներին աջակցություն տրամադրելու նպատակով քոլեջում իրականացվում են մենթորության աշխատանքներ: Այս գործընթացը փաստաթղթային հիմքով կանոնակարգված չէ: Մենթորներ լինում են ամբիոնի վարիչները և փորձառու դասախոսները, որոնք փորձում են աջակցել սկսնակ դասախոսներին մատենավարության, դասի ճիշտ պլանավորման, իրականացման հարցերում: Մենթորական աշխատանքները հիմնականում իրականացվում են հասարակական հիմունքներով՝ ստանալով բարոյական խրախուսումներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի պատմության մեջ եղել են դեպքեր, երբ ֆինանսական միջոցների առկայության դեպքում մենթորները նաև ստացել են հավելավճարներ:

Համաձայն կազմակերպական կառուցվածքի՝ Քոլեջն իր առաքելության և խնդիրների լուծման համար հիմնականում ունի վարչական և ուսումնաօժանդակ կազմ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ 2023թ. հունվար ամսից քոլեջն ունի միայն գրադարանավարի և բուժքրոջ կարիք, ներկայումս այդ գործառույթները հասարակական հիմունքներով իրականացվում են այլ աշխատակիցների կողմից: Քոլեջը պլանավորում է այդ հաստիքները համալրել նոր ուսումնական տարվա սկզբին:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում ԱՊՔ-ի որակյալ և պատրաստված կադրային ներուժ ունենալու ձգտումը, տարածաշրջանի առանձնահատկություններով և աշխատավարձերի ցածր լինելով պայմանավորված՝ քոլեջն ունի պրակտիկ և բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման մարտահրավեր: Այս տեսակետից փորձագիտական խումբը նշում, է առավել հստակ և թիրախային մարտավարության մշակումը կնպաստի որակյալ կադրերի ներգրավմանը: Այս խնդրի լուծումը քոլեջը որոշակիորեն կարողացել է գտնել ժամավճարային կամ համատեղող դասախոսական կազմ ներգրավելով, սակայն դեռևս նկատելի է պրակտիկ մասնագետների առավել լայն շրջանակի ընդգրկման

անհրաժեշտությունը, որը կնպաստի ուսանողների մասնագիտական գործնական կարողությունների զարգացմանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ դասախոսական անձնակազմի ընտրությունը քոլեջը սկսել է իրականացնել մրցութային կարգով, այնուամենայնիվ, հաշվի առնելով քոլեջի տարածաշրջանային դիրքավորումը՝ այս փուլում այն դեռևս լիարժեք արդյունավետ լինել չի կարող, քանի որ դիմողների քանակը չի գերազանցում մեկ անձը, մրցույթ որպես այդպիսին տեղի չի ունենում: Բացի այդ, փորձագիտական խումբը նշում է, որ հարցատոմսերի կազմման գործընթացը կանոնակարգման անհրաժեշտություն ունի, իսկ հարցաշարերը՝ բովանդակային բարելավման, որը թույլ կտա բացահայտելու մրցույթի մասնակցի՝ մոդուլներին համապատասխան, մասնագիտական պրակտիկ կարողությունները և դասավանդման հմտությունները:

Հաշվի առնելով քոլեջում միջին մասնագիտական կրթական ծրագրերի բազմազանությունը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊՔ-ն կարիք ունի սահմանելու դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ՝ ըստ կրթական ծրագրերի և մասնագիտական մոդուլների, ինչը թույլ կտա ընտրելու քոլեջին անհրաժեշտ կարողություններ ունեցող դասախոսներ:

Դրական է, որ Քոլեջում որոշակիորեն գործում են դասախոսների մասնագիտական որակները գնահատող մեխանիզմներ: Փորձագիտական խումբը կարևորում է նաև ուսումնառության պլաններում «դասի առանցքային կետերի ամփոփում» բաժնի առկայությունը, դրանց լիարժեք օգտագործումը հնարավորություն կընձեռի դասախոսին գնահատելու իր յուրաքանչյուր դասի արդյունավետությունը, որն էլ իր հերթին կնպաստի հաջորդ դասին խուսափելու նախորդի անհաջողություններից: Խումբը գտնում է, որ դասախոսի գնահատման նշված բոլոր մեխանիզմների լիարժեք և համակցված օգտագործումը միայն քոլեջին հնարվորություն կընձեռի հավաքագրել տվյալներ, որոնք թույլ կտան բացահայտելու ինչպես ուսանողների կարիքները, այնպես էլ դասախոսների՝ ապահովելով երկու կողմերի առաջընթացը:

Դրական է, որ դասախոսների մեծամասնությունն ունի դասախոսական փաթեթներ, դրանց զարգացման և բարելավման՝ ուսանողներին ներկայացվող առաջադրանքների և գրականության ցանկի բազմազանեցման պարագայում, կարող են դառնալ ուսանողի առաջընթացի գնահատման արդյունավետ գործիք:

Դրական է, որ դասախոսական կազմի կատարելագործման նպատակով կազմակերպվում են մեթոդական վերապատրաստումներ, այս տեսանկյունից փորձագիտական խումբը կարևորում է նաև դասախոսական կազմի կարիքի բացահայտումը, ինչպես նաև հետագայում վերապատրաստման արդյունավետության գնահատումը, որը կարող է նպաստել դասախոսների շարունակական զարգացմանը: Առաջնահերթ է նաև մասնագիտական վերապատրաստումների կազմակերպումը, այս տեսանկյունից կարևոր դերակատարում կարող են ունենալ գործատուները և սոցիալական գործընկերները (բուհեր, ՀԿ-ներ և այլն): Դրական է այն, որ քոլեջը փորձում է ներքին զեկուցումների և մեթոդական կատարելագործմանն ուղղված աշխատանքներով մեղմել վերապատրաստումների բացակայությունը: Գովելի է, որ Քոլեջը գիտակցել է անձնակազմի SS

ոլորտի վերապատրաստման կարիքը և պլանավորում է ներքին ռեսուրսների հաշվին կազմակերպել վերապատրաստումներ:

ԱՊՔ-ն մշակել է «Աշխատակիցների պարգևատրման, խրախուսման և առաջխաղացման կարգ», սակայն այն լիարժեք գործարկելու համար քոլեջի ֆինանսական միջոցները չեն բավարարում, անհրաժեշտություն է նկատվում ֆինանսական միջոցների դիվերսիֆիկացման: Գովելի է նաև, որ քոլեջում առկա են դասախոսական կազմի առաջընթացի դեպքեր, որը նույնպես կարող է մոտիվացիա հանդիսանալ դասախոսական կազմի համար:

ԱՊՔ-ում սկսնակ դասախոսներին աջակցություն տրամադրելու նպատակով իրականացվում են մենթորության աշխատանքներ, վերջինիս անհրաժեշտությունն ավելի է ընդգծվում վերջին տարիներին մեծ քանակով նոր դասախոսներ ընդունելու փաստով: Մի կողմից դրական է, որ դասախոսական կազմը երիտասարդանում է, մյուս կողմից էլ այն ենթադրում է քոլեջի կողմից հավելյալ մեծ աշխատանք՝ նոր դասախոսների ադապտացիան ապահովելու համար: Փորձագիտական խումբը գտնում է, որ գործընթացները կանոնակարգելը հնարավորություն կընձեռի քոլեջին մեծացնելու մենթորների և դասախոսների պատասխանատվությունը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջն իր առաքելության և խնդիրների լուծման համար ընդհանուր առմամբ ունի վարչական և ուսումնաօժանդակ կազմ, ինչը նաև արտացոլված է կազմակերպական կառուցվածքում, սակայն խորքային վերլուծություններ այս ուղղությամբ դեռևս իրականացված չեն:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՊՔ-ն իր կրթական ծրագրերն իրականացնելու համար ունի համապատասխան որակավորում ունեցող դասախոսական կազմ, ներդրված են դասախոսական կազմի երիտասարդացման մեխանիզմներ, վերջին տարիներին ներգրավվել են աշխատաշուկայից պրակտիկ մասնագետներ, առկա են դասախոսական կազմի առաջընթացի դեպքեր, ունի համեմատաբար կայուն դասախոսական կազմ, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊՔ-ն բավարարում է 5-րդ չափանիշի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր: ԱՊՔ-ն իր՝ 2020-2025թթ. ԶԾ-ում հետազոտությունը որպես նպատակ և առաջնահերթություն չի դիտարկում: Քոլեջը դեռևս չի սահմանել իր հետազոտական ուղղությունները, այն չի դիտարկվում որպես նորարարություն (ինովացիա) իրականացնելու և

ուսանողների մոտ վերլուծական, քննադատական, ստեղծագործական մտածողություն ձևավորելու միջոց:

Քոլեջում դասախոսական անձնակազմը հիմնականում չի իրականացնում հետազոտական աշխատանքներ, միայն ամբիոնի նիստերի ընթացքում դասախոսները ներկայանում են մեթոդական զեկուցումներ, որոնք տարբեր աղբյուրներից ընդհանրացված նյութեր են դասավանդման մեթոդների և այլ թեմաների վերաբերյալ: Այդ աշխատանքների շրջանակներում դասախոսները չեն ուսումնասիրում իրենց մասնագիտական ոլորտի արդի ազգային ու միջազգային փորձը: Դասախոսական կազմի կողմից չեն տպագրվում գրքեր կամ ձեռնարկներ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նման պասիվությունը կապված է մոտիվացիայի պակասի և ժամանակի սղության հետ: Ինչ վերաբերում է ուսանողներին, ապա ՄԿԾ-ների («Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» և «Դիզայն») շրջանակներում ուսանողներն իրականացնում են հետազոտական աշխատանքներ՝ դիպլոմային, կուրսային, ռեֆերատային աշխատանքների տեսքով: Ավարտական աշխատանքներ թույլատրվում են իրականացնել բոլոր ուսանողներին՝ անկախ առաջադիմությունից: Թեմաներն առաջարկվում են դասախոսների կողմից՝ հաշվի առնելով ուսանողների մասնագիտական կարողությունները, առաջադրված թեմաները քննարկվում են նաև ուսանողների հետ և հաստատվում ամբիոններում:

«Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» ՄԿԾ-ի շրջանակներում ներկայացվող դիպլոմային աշխատանքները կատարվում են՝ «Տղամարդու վերնաշապիկ», «Կանացի անդրավարտիք արհեստական գործվածքից» և այլ թեմաներով: Աշխատանքներն իրականացնելու համար ուսանողներն ուսումնասիրում են հագուստի պատրաստման տեխնոլոգիա, կարի արտադրության տեխնոլոգիա, տեխնոլոգիայի, սարքավորումների նախագծման և ավտոմատացման հիմունքներ: Դիպլոմային աշխատանքները բաղկացած են՝ մոդելի ընտրության հիմնավորումից, մոդելի նկարից, հանգույցի մշակումից, անվտանգությունից, գրականության ցանկից և այլ բաժիններից: Փորձագիտական խումբը նշում է, որ դիպլոմային աշխատանքներում բացակայում են տեխնոլոգի համար կարևորագույն որոշ բաժիններ՝ օրինակ աշխատանքներում ներկայացված չէ ներկայացվող հագուստի պատրաստման համար ընտրված գործվածքի բաղադրությանն առնչվող տեղեկատվություն (նյութագիտություն՝ արհեստական, բնական, սինթետիկ) կամ տնտեսագիտական մաս, օրինակ՝ որքան գումար պետք է հատկացվի տվյալ արտադրանքի մեկ նմուշ-օրինակը պատրաստելու համար: Աշխատանքների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ տեսական հատվածի մշակման ժամանակ բացակայում է ուսանողի ինքնուրույնությունը, օրինակ՝ ավարտական աշխատանքի «Նյութի ընտրություն և հիմնավորում» բաժնում տեսականորեն ներկայացված է, որ գործվածքի ընտրության ժամանակ պետք է հաշվի առնել գործվածքի հատկությունները, սակայն ներկայացված չէ, թե ուսանողի կողմից ընտրված տվյալ մոդելը ստանալու համար (օրինակ՝ երեխայի շապիկ) գործվածքի ընտրությունն իրականացնելիս որ հատկություններն են հաշվի առնվել: Դիպլոմային աշխատանքի մաս է կազմում նաև որևէ հագուստ սկզբից մինչև վերջ պատրաստելը: Ներկայացված հագուստների

ուսումնասիրությունը ցույց տվեցին, որ դրանք ունեն մի շարք խնդիրներ՝ թևի ոչ ճիշտ տեղադրում թևատեղիում, հարդարող կարերի անհամաչափություններ և այլն։

«Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» ՄԿԾ-ի շրջանակներում ուսանողները ներկայացնում են նաև կուրսային աշխատանքներ «Արտադրության կազմակերպում և կառավարում» մոդուլից։ Կուրսային աշխատանքներ գրվում են հետևյալ թեմաներով՝ «Արտադրության կազմակերպման մեթոդներ», «Արտադրական գործընթացը, նրա կազմը և դասակարգումը», «Հոսքագծի դասակարգում» և այլն։ Կուրսային աշխատանքների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ դրանք չունեն հետազոտական բնույթ, հիմնականում տարբեր աղբյուրներից մեջբերումներ են, բացակայում է դրանց ընդհանրացման հիման վրա վերլուծությունները և ուսանողի ինքնուրույնությունը։ Աշխատանքները չունեն տրամաբանական հստակ կառուցվածք, «Ներածություն» և «Եզրակացություն» բաժինները իրենցից ենթադրում են գրականությունից վերցված տեսական նյութի շարադրանք, «Եզրակացություն» բաժնում տեսանելի չէ, թե՛ ուսանողը հետազոտական աշխատանքն իրականացնելիս ինչպիսի եզրահանգման է եկել։ Աշխատանքների վերջում առկա է գրականության ցանկ, սակայն հիմնական մասում բացակայում են համապատասխան հղումները։

Անհրաժեշտ է նշել, որ քոլեջում առկա չէ հետազոտական աշխատանքների կատարման ուղեցույց կամ սահմանված կանոնակարգ, ինչպես նաև ուսանողները նախապես (դասընթացի ձևով) չեն ուսումնասիրում հետազոտություն իրականացնելու համար անհրաժեշտ գործիքակազմ և մեթոդաբանություն։ Մշակված չեն նաև հետազոտական աշխատանքի գնահատման հստակ ռուբրիկներ/չափանիշներ, որը ցույց կտա, թե ուսանողն իր աշխատանքի ամեն բաղադրիչն ինչպես պետք է կատարի և ինչ միավոր է դրա համար նախատեսված։ Դիպլոմային աշխատանքների վերաբերյալ կարծիք ներկայացնում է միան տվյալ ուսանողի անմիջական ղեկավարը։

Ներկայացված մյուս երկու ՄԿԾ-ներում՝ «Հաշվապահական հաշվառում» և «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ», հետազոտական աշխատանքներ չեն իրականացվում, այս ծրագրերում դասախոսական կազմի անհատական նախաձեռնությամբ։

Իրականացնում են որոշ վերլուծական աշխատանքներ, օրինակ՝ «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» ծրագրում ուսանողներին հանձնարարվում է կատարել մրցակցական ելույթների/խաղերի տեխնիկական և տակտիկական վերլուծություններ, «Հաշվապահական հաշվառում» ծրագրում՝ իրականացնել անալիտիկ (վերլուծական) և սինթետիկ (ընդհանրացված) հաշվառում և այլն։

Քոլեջում հետազոտական աշխատանքների իրականացման համար խրախուսման մեխանիզմներ առկա չեն։ Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցվածության միակ մեխանիզմը ուսանողների դիպլոմային, անհատական և կուրսային աշխատանքներն են։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ ԱՊՔ-ում իրականացվում են հետազոտական բնույթի որոշ աշխատանքներ։ Փորձագիտական խումբը

մտահոգիչ է համարում, որ Քոլեջում հետազոտությունը առաջնահերթություն չի դիտարկվում, հստակ չեն նաև քոլեջի նպատակները և քաղաքականությունն այս ուղղությամբ։

Բացասական է, որ հետազոտական աշխատանքի իրականացումը քոլեջի համար չի դարձել նորարարություն իրականացնելու, նորարարությունը քոլեջ բերելու հիմնական միջոց, արդյունքում քոլեջային կրթությունը կարող է կորցնել իր գրավչությունը ինչպես դիմորդների, ուսանողների, այնպես էլ գործատուների համար։ Այս համատեքստում կարևոր է խթանել դասախոսական անձնակազմի հետազոտական գործունեության իրականացումը, որը կնպաստի դասախոսական կազմի մասնագիտական աճին, ուսանողների ներգրավմանը համատեղ հետազոտական աշխատանքներին, ինչպես նաև ավելի ուժեղ կդարձնի հետազոտություն-ուսումնառություն կապը։

Մտահոգիչ է, որ ուսանողների կողմից իրականացված հետազոտական աշխատանքներն իրենց բովանդակությամբ չեն նպաստում ուսանողների վերլուծական, հետազոտական և ստեղծագործական մտքի զարգացմանը, որը կարող է վտանգել ՈԱՇ-ի 5-րդ մակարդակի լիարժեք ձեռքբերումը։ Փորձագիտական խումբը ընդգծում է նախքան հետազոտական աշխատանքներ սկսելը ուսանողներին հետազոտություն իրականացնելու գործիքակազմի, քոլեջի կողմից ներկայացվող ձևաչափային պահանջների հետ ծանոթացման անհրաժեշտությունը, որը կնպաստի հետազոտական աշխատանքների բովանդակային և տեխնիկական կողմերի բարելավմանը։ Բարելավված հետազոտական աշխատանքները հետագայում ուսանողների համար կարող են ծառայել որպես պորտֆոլիո և հիմք հանդիսանալ աշխատանքի ընդունվելու համար։ Այս տեսանկյունից հրատապ է նաև Հետազոտական աշխատանք իրականացնելու ուղեցույցի մշակումը, որտեղ ներկայացված կլինի, թե ինչ է հետազոտական աշխատանքը, ինչպիսի մասերից այն պետք է բաղկացած լինի, ինչպիսի չափանիշներով է այն գնահատվելու և այլն։ Ուղեցույցի մշակման աշխատանքներում կարևոր է նաև հետազոտության ոլորտում փորձառություն ունեցող մասնագետի ներգրավումը, այս տեսանկյունից քոլեջը կարող է օգտագործել իր արտաքին կապերը այլ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ համագործակցելու և այս գործընթացում աջակցություն ստանալու համար, բացի այդ փորձի փոխանակումը կնպաստի նաև քոլեջի դասախոսների հետազոտական աշխատանքներ գնահատելու և ուսանողներին ուղղորդում և աջակցություն տրամադրելու կարողության զարգացմանը։

Կարևոր է նաև ներդնել նաև դիպլոմային աշխատանքների գրախոսման ընթացակարգ, որտեղ կապահովվի ինչպես ղեկավարի կարծիքը, այնպես էլ՝ արտաքին գրախոսի (տվյալ ոլորտի փորձառու մասնագետի), որը թույլ կտա վեր հանել աշխատանքներում եղած խնդիրները և կապահովի ուսանողների արժանահավատ և օբյեկտիվ գնահատումը։

Դրական է, որ որոշ դասախոսների կողմից ուսանողներին ներկայացվում են վերլուծություններ ենթադրող հանձնարարականներ, սակայն դրանք ինստիտուցիոնալ հիմքի վրա դրված չեն, որի արդյունքում կարող է վտանգվել ուսանողի՝ մասնագիտական խնդիր լուծելու և որոշումներ կայացնելու կարողության ձևավորումը։

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ հետազոտությունը քոլեջի համար առաջնահերթություն չի դիտարկվում, առկա չէ հետազոտական աշխատանք իրականացնելու հստակ քաղաքականություն, ուսանողների կողմից իրականացված հետազոտական աշխատանքներում բացակայում է վերլուծական մասը և ինքնուրույնությունը, դասախոսական կազմը հիմնականում չի իրականացնում հետազոտական աշխատանքներ, ներդրված չեն հետազոտական աշխատանքներ իրականացնելու խրախուսման հստակ մեխանիզմներ, առկա չէ հետազոտական գործունեության և ուսումնառության միջև կապ, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը չի բավարարում չափանիշ 6-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ԱՊՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր: Արթիկի պետական քոլեջն ունի 0,515 հա տարածք, որտեղ տեղակայված է 4 հարկանի շենքը՝ 2508 մ2 մակերեսով: Քոլեջն ունի 38 լսարանային ֆոնդ, որից 17-ն առարկայական կաբինետներ են, իսկ նրանցից մեկը համալրված է 2 հեռուստացույցներով: Առարկայական կաբինետները հիմնականում հագեցած են դիդակտիկ նյութերով: ԱՊՔ-ում առկա է նաև դահլիճ, մարզադահլիճ, բաց մարզահրապարակ (վերջինս քոլեջին չի պատկանում), գրադարան, ընթերցասրահ, 3 համակարգչային կաբինետ՝ հագեցված համակարգիչներով և նոթբուքներով: Ընդհանուր առմամբ Քոլեջն ունի 25-30 համակարգիչ և 7 նոթբուք: Համակարգչային ռեսուրսների հիմնական մասը կիրառվում են «Հաշվողական տեխնիկայի ավտոմատացված համակարգեր» ՄԿԾ-ի, «Համակարգչային օպերատորության հիմունքներ» մոդուլի ուսումնասիրման և «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագրի շրջանակներում ՀԾ-ի ուսումնասիրման համար:

Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ քոլեջն ունի վերանորոգման կարիք: Պետք է նաև փաստել, որ վերջին երկու տարիներին քոլեջը սեփական ֆինանսական միջոցներով և տարբեր կազմակերպությունների (People in need, Դեպի Հայք) հետ համագործակցության արդյունքում վերանորոգել է շենքի առաջին հարկը: People in need ՀԿ-ի համագործակցության արդյունքում ԱՊՔ-ն ձեռք է բերել ժամանակակից մեքենասարքավորումներով հագեցված հագուստի պատրաստման տեխնոլոգիայի և կարի արտադրության տեխնոլոգիայի երկու կաբինետներ: Կաբինետները հագեցված են կարի մեքենաներով, ձևասեղանով, արդուկով և մանեկեններով: Պետք է նշել, որ մինչ այս լաբորատորիաների ստեղծումը, քոլեջում տվյալ ՄԿԾ-ի իրականացման համար համապատասխան ռեսուրսներ չեն եղել: «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» ՄԿԾ-ի

շրջանակներում գործնական դասերն իրականացնելու համար Քոլեջը տրամադրում է որոշակի ֆինանսական ռեսուրսներ ուսումնական նյութեր (թելեր, ասեղներ և այլն) ձեռք բերելու համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները և դասախոսները նույնպես մասնակցում են նյութերի ձեռքբերմանը՝ մասնավորապես կտորների:

«Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» կրթական ծրագրի իրականացման համար Քոլեջն ունի համապատասխան ռեսուրսների ներգրավման խնդիր: Մարզադահլիճները, որոնք գտնվում են հիմնական մասնաշենքի հարակից տարածքում, ունեն կապիտալ վերանորոգման և մարզական գույքով համալրման կարիք: Կառավարման խորհրդի մարզպետարանի ներկայացուցիչները նշեցին, որ մշակման փուլում է գտնվում մարզադահլիճի կապիտալ վերանորոգման նախագիծը:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջն ունի նաև լոկալ ջեռուցման խնդիր, լսարանները ջեռուցվում են էլեկտրական տաքացուցիչներով, քանի որ առկա է գազաֆիկացման խնդիր: Համայնքի աջակցությամբ քոլեջը նախաձեռնել է կազմել համատեղ ֆինանսական նախագիծ, որը կներկայացվի ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը ֆինանսական աջակցություն ստանալու համար: Հարկ է նշել, որ ՀՀ ԿԳՄՍ նախարարության միջոցներով նաև իրականացվել է քոլեջի տանիքի վերանորոգումը:

Ըստ քոլեջի տրամադրած տվյալների՝ գրադարանում առկա է 8000 գիրք, որը ներառում է ինչպես մասնագիտական, այնպես էլ հանրակրթական, գեղարվեստական գրականություն: Պետք է նշել, որ քոլեջն ունի ժամանակակից մասնագիտական գրականությամբ գրադարանը զինելու կարիք: Արդիական գրականության անհրաժեշտությունը, ըստ ՄԿԾ-ների տարբերվում է, քոլեջը ստանում է գրականություն ՄԿՈՒԶԱԿ-ից, երբեմն դասախոսական կազմն ինքնուրույն է ձեռք բերում անհրաժեշտ գրականություն, որը ուսանողներին փոխանցվում է որպես ուսումնառության նյութ:

Հանրակրթական բլոկի գրականությունից ուսանողները կարող են օգտվել նաև առցանց տարբերակով, պատերին փակցված են համապատասխան QR կոդեր համակարգ մուտք գործելու համար: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողները գրադարանից հաճախ չեն օգտվում՝ նախընտրելով համացանցում եղած տեղեկատվությունը: Երբեմն էլ հայերեն լեզվով գրականություն չլինելու պատճառով՝ քոլեջն օգտագործում է բուհական դասագրքեր, օրինակ՝ «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» ՄԿԾ-ում:

Քոլեջը յուրաքանչյուր ֆինանսական տարվա սկզբում իրականացնում է ֆինանսական ռեսուրսների բաշխում տարեկան նախահաշվի համաձայն: Կազմում է բյուջետային մուտքերի և ելքերի տարեկան նախահաշիվ և ներկայացնում է բյուջեի կատարողականի մասին հաշվետվություն: Քոլեջի բյուջետային մուտքերի գերակշիռ մասն ապահովվում է պետական ֆինանսավորման հաշվին՝ 2023թ.-ին կազմելով շուրջ 89.97%-ը, արտաբյուջետային մուտքերը՝ 10.03%-ը, վերջինս գոյանում է միայն վճարովի համակարգում սովորող ուսանողների վարձավճարներից: Ընդհանուր բյուջեի 82%-ն ուղղվում է աշխատակիցների աշխատավարձերին, իսկ մնացածը՝ կրթաթոշակների տրամադրմանը (9.4%), ապրանքների ձեռք բերմանը (5.54%) և այլ ծախսերին (2.06%): Քոլեջը հնարավորություն ունի դրամական մուտքեր ապահովել նաև կարճաժամկետ ծրագրերից:

Ծախսերը պլանավորվում են՝ հիմք ընդունելով ֆինանսական կարողությունները, գործընթացներն ապահովվում են գնումների բաժնի միջոցով: Քոլեջն ունի «Հաշվապահական հաշվառման վարման քաղաքականություն», սակայն պետք է նշել, որ ֆինանսական միջոցների բաշխումը արտացոլված չէ այդ փաստաթղթում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ֆինանսները բաշխվում են ըստ առաջնահերթությունների՝ աշխատավարձ, կոմունալ վճարումներ, պետական հարկեր և այլն: Կրթական ծրագրերի ապահովման տեսանկյունից ռեսուրսները ձեռք են բերվում՝ ըստ ստորաբաժանումներից եկող պահանջագրերի:

Ներքին փաստաթղթաշրջանառությունը Քոլեջում կազմակերպվում է էլեկտրոնային և թղթային տարբերակներով: Ըստ ինքնավերլուծության՝ ներքին էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է լոկալ ցանցի միջոցով, իսկ արտաքինը՝ «Mulberry» համակարգի միջոցով: ԱՊՔ-ում գործող հիմնական փաստաթղթերը հրապարակված են նաև քոլեջի պաշտոնական կայքէջում, վերջինս ստեղծվել և թարմացվել է 2023թ-ին՝ Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ՝ «Անցում կրթությունից աշխատաշուկա» ծրագրի շրջանակում, որն իրականացվել է «People in need» ՀԿ-ի կողմից:

Քոլեջի տարածքը ցանկապատված է և անվտանգ ուսանողների ազատ տեղաշարժման համար, առկա են նաև հերթապահներ, ովքեր վերահսկում են ուսանողների մուտքը և ելքը: 2021 թվականին համաքաղաքացու ֆինանսավորմամբ Քոլեջի բակը մասնակի վերանորոգվել է: 2023թ. գործընկեր կազմակերպության կողմից Քոլեջին տրամադրվել են տնկիներ՝ տարածքի կանաչապատման նպատակով:

Քոլեջում կրթություն է ստանում երկու՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) ուսանողներ, ովքեր հենաշարժողական խնդիրներ չունեին: ԱՊՔ-ի մուտքի մոտ առկա է թեքահարթակ, միայն առաջին հարկն է որոշակիորեն հարմարեցված ԿԱՊԿՈՒ ուսանողների համար:

Քոլեջն ունի բուժկետ, որն ապահովված է սանիտարահիգիենիկ պայմաններով և առաջին օգնության դեղորայքով: Անհրաժեշտության դեպքում, ըստ շահակիցների, ուսանողներին և աշխատակազմին տրամադրվում է առաջին բուժօգնություն: Փորձագիտական այցի ընթացքում բուժկետը չի ունեցել բուժքույր, հաստիքը թափուր է 2023թ. սկզբից, այն պլանավորվում է լրացվել նոր ուսումնական տարում:

Քոլեջն ունի նաև քաղաքացիական պաշտպանության շտաբ, վերջինիս պետի կողմից տարեկան մեկ անգամ ստուգվում են հակահրդեհային միջոցները և իրականացվում է «տագնապ» ազդանշանի ստուգում: Մասնաշենքի առավել տեսանելի մասերում փակցված են տարահանման սխեմաներ, միջանցքներում առկա են հակահրդեհային կրկամարիչներ: Տարածքն ապահովված է ինտերնետ կապով:

Քոլեջում ռեսուրսների հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ որպես այդպիսին ներդրված չեն: Ուսանողների և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետությունը գնահատող մեխանիզմների ներդրումը պլանավորման փուլում են:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջն իր ՄԿԾ-ներն իրականացնելու համար ունի համապատասխան շենք, մասնագիտական կաբինետներ, լաբորատորիաներ, լսարաններ, կահավորանք, որոնք կարող են բավարարել կրթության իրականացման համար անհրաժեշտ նվազագույն պահանջներին:

Սահմանափակ ֆինանսական միջոցներով պայմանավորված, քոլեջն իր ֆինանսական ռեսուրսները օգտագործում է ըստ առաջնահերթությունների (աշխատավարձ, կոմունալ վճարումներ և այլն), սակայն ոչ՝ ռազմավարական ուղղությունների, որը կարող է վտանգի տակ դնել ԱՊՔ-ի շարունակական զարգացումը և զարգացման ծրագրի ամբողջական իրականացումը: Այս տեսանկյունից քոլեջի համար առաջնահերթ է ֆինանսական միջոցների դիվերսիֆիկացումը, որը կնպաստի ֆինանսական կայուն աճին:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ տարբեր համագործակցությունների արդյունքում քոլեջին հաջողվել է ձեռք բերել նոր լաբորատորիաներ և սարքավորումներ, որը կարող է նպաստել պրակտիկ կրթության իրականացմանը և ուսանողների գործնական կարողությունների զարգացմանը: Այսուհանդերձ, «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» ՄԿԾ-ի իրականացման համար քոլեջի մարզադահլիճը հրատապ հիմնանորոգման և մարզագույքով համալրման կարիք ունի՝ հաշվի առնելով ծրագրային պահանջները: Այս ամենը ֆինանսական միջոցների զգալի ներդրում է պահանջում, որը չի կարող ապահովվել քոլեջի բյուջեով: Դրական է, որ այս և այլ խնդիրների լուծման նպատակով քոլեջը փորձում է գտնել գործընկերներ:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջի միջավայրն ընդհանուր առմամբ անվտանգ է և որոշակիորեն հարմարեցված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար: Այս համատեքստում կարևոր է նաև առաջիկայում քոլեջի բուժքրոջ հաստիքի համալրումը:

Քոլեջում փաստաթղթաշրջանառությունը իրականացվում է ինչպես ներքին ցանցի, այնպես էլ «Mulberry» համակարգի միջոցով, որը նպաստում փաստաթղթերի թվայնացման գործընթացներին:

Փորձագիտական խումբը կարևորում է դասախոսների և ուսանողների կարիքների վերհանման, մասնավորապես՝ հարցումների իրականացման հստակ և պարբերական մեխանիզմների ներդրումը, որը կարող է նպաստել ռեսուրսների թիրախային և արդյունավետ պլանավորմանը, ինչպես և դրանց շարունակական բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՊՔ-ն կրթական ծրագրերի իրականացման համար ունի համապատասխան ենթակառուցվածք, վերջին տարիներին իրականացվել են բարեկարգման և ռեսուրսների համալրման աշխատանքներ, առկա է ուսանողների և դասախոսական համար անվտանգ միջավայր, արտաքին և ներքին փաստաթղթաշրջանառության գործուն համակարգ, փորձագիտական խումբը գտնում է, որ Քոլեջը բավարարում է չափանիշ 7-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Արթիկի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր: ԱՊՔ-ում առկա է որոշակիորեն ձևավորված հաշվետվողականության ներքին և արտաքին համակարգ: Որպես ներքին հաշվետվողականություն՝ քոլեջի ստորաբաժանումները՝ ամբիոնները, տնօրենի տեղակալները, կարիերայի կենտրոնը, ուսումնական մասի վարիչը և այլք հաշվետվություններ են ներկայացնում տնօրենին և տնօրինական խորհրդին, իսկ տնօրենը, հաշվապահը՝ կառավարման խորհրդին: Ամբիոնների վարիչները իրենց հաշվետվությունները ներկայացնում են նաև ամբիոնի նիստերում, որոնց մասնակցում է տնօրենը և ուսումնական աշխատանքի գծով տնօրենի տեղակալը: Բացի այդ, պարբերաբար ընտրվում են կամայական ամբոիններ, որոնք իրենց հաշվետվությունը ներկայացնում են մանկավարժական խորհրդում: Պետք է նշել, որ քոլեջում ստորաբաժանումների հաշվետվությունների միասնական ձևաչափ առկա չէ, բացի այդ հաշվետվությունների մի մասը ներկայացվում են ձեռագիր, մյուս մասը՝ տպագիր: Հաշվետվությունների ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի հաշվետվությունները վերլուծական են, ներկայացված են թվային համեմատական տվյալներ և վերլուծություններ, վեր են հանված նաև բարելավման ենթակա կողմեր, իսկ մյուսներում՝ առավել նկարագրական են: Պետք է նշել, որ միշտ չէ պլանավորում-հաշվետվություն, ինչպես նաև կարճաժամկետ-երկարաժամկետ պլանավորում կապը տեսանելի, երբեմն աշխատանքային պլաններում գործողություններ նշված են տվյալ աշխատակցի գործառույթները:

Քոլեջի տնօրենի հաշվետվությունները տարեկան են, այցից պարզ դարձավ, որ տնօրենը մտադիր է դրանք փոխարինել 6-ամսյա հաշվետվություններով՝ նպատակ ունենալով ամփոփել կիսամյակային, այլ ոչ՝ տարեկան տվյալները: Պետք է նշել, որ տնօրենի հաշվետվությունները չեն ամփոփում քոլեջի ռազմավարական նպատակները և խնդիրները:

Որպես արտաքին հաշվետվողականություն՝ տնօրենը տարեկան հաշվետվություններ է ներկայացնում նաև ՀՀ ԿԳՄՄՆ նախարարությանը, որտեղ ներկայացված են տվյալներ իրականացվող գործընթացների՝ ֆինանսական գործունեության և դրամական հոսքերի, կրթական ծրագրերի և մասնագիտությունների, կադրային, ընդունելության արդյունքների վերաբերյալ:

Քոլեջի կարիերայի կենտրոնը նույնպես տրամադրում է եռամսյակային հաշվետվություններ ԿԳՄՍ նախարարությանը կապված ստորաբաժանման աշխատանքների և շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ:

ԱՊՔ-ում իրականացվող գործընթացների թափանցիկությունն ապահովվում է պաշտոնական կայքէջի միջոցով: Եռալեզու (հայերեն, ռուսերեն, անգլերեն) կայքէջը \asc.am\ վերջերս է մշակվել, դեռևս վերազինման փուլում է, անգլերեն և ռուսերեն բաժինները դատարկ են: Պետք է նշել, որ թարգմանությունների իրականացման համար քոլեջն ունի ներքին ռեսուրսներ: Կայքում տեղադրված են գործող կանոնադրությունները, նախահաշիվը, որոշ ստորաբաժանումների պլանները, հաստիքացուցակը և այլ փաստաթղթեր, հաշվետվություններն ու կատարողականները դեռևս հրապարակված չեն: Կայքէջի «Դիմորդ» բաժնում ներկայացված են ՄԿԾ-ների վերաբերյալ ամփոփ տվյալներ՝ ուսման տևողությունը, վարձավճարները, անվճար և վճարովի ուսուցման տեղերը և այլն: Կայքէջը պարունակում է տեղեկատվություն քոլեջի ընթացիկ գործունեության վերաբերյալ՝ պայմանագրերի կնքում, ՈւԽ գործունեություն, ընթացիկ միջոցառումներ և այլն: Ֆեյսբուքյան էջի միջոցով նույնպես լուսաբանվում է քոլեջի ընթացիկ գործունեությունը՝ տեղեկատվություն ցուցադրական և բաց դասերի, գրական և մարզական միջոցառումների և այլնի վերաբերյալ: Ֆեյսբուքյան հարթակով ԱՊՔ-ն 2021թ.-ին ներկայացրել է «Հաջողության պատմություն» վերնագրով տեսաուղերձ, որտեղ շրջանավարտները ներկայացրել են իրենց անցած ուղին, ներկայիս աշխատանքը, նման հոլովակների պատրաստումը շարունակական բնույթ չի կրել: Ֆեյսբուքյան էջը և կայքէջը ղեկավարվում է տնօրենի օգնականի կողմից:

ԱՊՔ-ի հետադարձ կապի ապահովման մեխանիզմներից է ԱՊՔ-ի ֆեյսբուքյան էջը և կայքէջը, վերջինս ունի հետադարձ կապ բաժինը, որտեղ շահակիցները կարող են հղել իրենց հետաքրքրող հարցերը, տեսնել կոնտակտային տվյալներ՝ հեռախոսահամար և էլեկտրոնային հասցե, ինչպես նաև քոլեջի գտնվելու վայրը: Ըստ քոլեջի՝ հասարակության հետ հետադարձ կապի ապահովման առավել արդյունավետ միջոցը Facebook սոցիալական հարթակն է: Կայքէջի արդյունավետության գնահատումը քոլեջը դեռևս չի իրականացրել:

Շրջանավարտների հետ հետադարձ կապը պահպանվում է Կարիերայի կենտրոնի կողմից, իսկ գործատուների հետ կապը՝ տնօրենի և պրակտիկաների ղեկավարների:

Արթիկի պետական քոլեջը հասարակությանը գիտելիք փոխանցելու նպատակով «People in need» կազմակերպության հետ կազմակերպել է երեք կարճաժամկետ ծրագրեր «Կարի արտադրության տեխնոլոգիա», «Տեքստիլ արտադրության տեխնոլոգիա», «Ջերմոցային տնտեսություն» թեմաներով: «People in need» կազմակերպության հետ կապ հաստատելու գործում քոլեջին աջակցել է ԿԳՄՍ նախարարությունը: Շահառուները եղել են տարածաշրջանի բնակիչները:

Քոլեջը «Դիզայն» ՄԿԾ-ի շրջանակներում մասնակցում է նաև տարբեր ցուցահանդեսների, որի ընթացքում ուսանողները ներկայացնում են իրենց ստեղծագործական աշխատանքները, ինչպես նաև «World Skills» միջազգային մրցույթների ժամանակ քոլեջն ունի իր ակտիվ մասնակցությունը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջում որոշակիորեն ձևավորված է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հաշվետվողականության համակարգ: Դրական է նաև, որ քոլեջի տնօրենը և նրա տեղակալը ներկա են գտնվում ամբիոնների հաշվետվությունների ներկայացմանը, որը նպաստում է ստորաբաժանումների թափանցիկության մեծացմանը, այնուամենայնիվ քոլեջում դեռևս առկա են ձեռագիր հաշվետվություններ, ստորաբաժանումների արձանագրություններ, որոնք ընթացս քոլեջի ռեսուրսների կիրառմամբ կարող են թվայնացվել՝ բարձրացնելով տեղեկատվության հուսալիությունը և փաստաթղթաշրջանառության որակական կողմը: Մտահոգիչ է, որ պլանավորում և հաշվետվություն, ինչպես նաև երկարաժամկետ-կարճաժամկետ պլանավորում կապը երբեմն չի երևում, որը հանգեցնում է նրան, որ հաշվետվությունները չեն դառնում ԶԾ-ի գնահատման միջոց: Փորձագիտական խումբը գտնում է, որ հաշվետվությունների միասնական ձևաչափի մշակումը և կիրառությունը հնարավորություն կընձեռի քոլեջին դուրս բերելու համակարգային տվյալներ, որոնք հիմք կհանդիսանան նաև որոշումների կայացման համար: Խումբը շեշտադրում է, որ կարևոր է ձևաչափում ներառել հստակ որակական և քանակական տվյալների վերլուծություն, բարելավման ենթակա կողմեր՝ ապահովելով նաև հաշվետվություն-զարգացման ծրագիր կապը, որը թույլ կտա հիմքեր ստեղծել զարգացման ծրագրի գնահատման համար:

Գովելի է, որ քոլեջը ձեռնամուխ է եղել եռալեզու կայքէջի մշակման հարցում, փորձագիտական խումբը շեշտադրում է նաև ռուսերեն և անգլերեն բաժինների թարմացման անհրաժեշտությունը, այդ աշխատանքներում ԱՊՔ-ն կարող է ներգրավել իր ունեցած ներքին ռեսուրսները, կայքի եռալեզու բովանդակության ապահովումը կնպաստի քոլեջի տեսանելիության բարձրացմանը նաև միջազգային գործընկերների շրջանում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում հետադարձ կապի ապահովման նպատակով տարբեր հարթակներում ներկայացված տվյալները, իսկ գործատուների և շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովման կայուն մեխանիզմները հնարավորություն կընձեռեն քոլեջին գնահատելու ուսումնական գործընթացի արդյունավետությունը և գտնելու բարելավման ենթակա հնարավոր ուղիները:

Հատկանշական է, որ հասարակությանը գիտելիք փոխանցելու տեսանկյունից քոլեջն իրականացրել է նաև 3 կարճաժամկետ ծրագրեր, որոնք նպաստել են նաև հավելյալ ռեսուրսների ձեռքբերմանը, այնուամենայնիվ այս գործընթացը շարունակական չի դարձել կապված պայմանագրի ավարտով: Խրախուսելի է, որ քոլեջը մասնակցում է նաև հասարակական տարբեր միջոցառումների, այնուամենայնիվ փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջում հասարակությանը գիտելիք փոխանցելու տեսանկյունից ԱՊՔ-ն կարող է ունենալ առավել կարևոր դերակատարում՝ հաշվի առնելով նաև քոլեջի Արթիկ քաղաքում միակը լինելու հանգամանքը, որն իրենից ենթադրում է նաև առավել մեծ սոցիալական պատասխանատվություն:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՊՔ-ն ունի արտաքին և ներքին հաշվետվողականության որոշակիորեն ձևավորված համակարգ, ձեռնամուխ է եղել

պաշտոնական կայքէջի մշակմանը և թողարկմանը, քոլեջի գործունեությունը լուսաբանվում է նաև սոցիալական հարթակներով, առկա են հետադարձ կապի ապահովման որոշակի մեխանիզմներ և պատասխանատուներ, վերջին երկու տարում իրականացվել են կարճաժամկետ ծրագրեր, փորձագիտական խումբը գտնում է, որ ՄՈՒՀ-ը համապատասխանում է չափանիշ 8-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՍՆ Արթիկի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր: Արթիկի պետական քոլեջում արտաքին կապերի և միջազգայնացմանն ուղղված հստակ քաղաքականություն ներդրված չէ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջում արտաքին կապերի ձևավորման գործում մեծ դերակատարում ունի քոլեջի տնօրենը, գործատուների հետ համագործակցության տեսանկյունից ներգրավված են նաև պրակտիկայի վարիչը և կարիերայի կենտրոնը: Պրակտիկաների կազմակերպման և շրջանավարտների զբաղվածությունն ապահովելու շրջանակներում ԱՊՔ-ն համագործակցում է շուրջ 19 կազմակերպությունների հետ՝ Արթիկի թիվ 2 նախակրթարան, Արթիկի գեղարվեստի դպրոց, «Lentex», «Չեխ-Արմ-Ինվեստ», «Գրին Ֆուդ», «Վոլյում Գրուպ» ՍՊԸ-ների, «Արմաթ» ինժեներական լաբորատորիա, «ՎԷՎ» ԲԲԸ-ի և այլն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ԱՊՔ-ն նաև ակտիվ համագործակցում է սոցիալական կազմակերպությունների հետ՝ նախատեսելով զարգացնել սոցիալական գործընկերությունը: Քոլեջն ունի ՀԿ-ների և գործատուների հետ հուշագրեր, պայմանագրեր, որոնց շրջանակներում իրականացվող գործընթացների արդյունքում «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» ՄԿԾ-ն կազմակերպում է ԱՀՈՒ ձևաչափով: Հատկանշական է նաև «Դեպի Հայք», Եվրոպական միության աջակցությամբ «People in need» չեխական ՀԿ-ի հետ համագործակցությունը, վերջինիս հետ համատեղ քոլեջը 2022թ. իրականացրել է 3 կարճաժամկետ ծրագրեր, ինչպես նաև ձեռք է բերել անհրաժեշտ նյութատեխնիկական բազա (կարի լաբորատորիաները), իսկ «Դեպի Հայք» ՀԿ-ի հետ համագործակցության արդյունքում քոլեջում իրականացվել են վերանորոգման աշխատանքներ: Պետք է փաստել, որ ՀԿ-ների հետ համագործակցության համար միջնորդ է հանդիսացել ԿԳՄՍ նախարարությունը:

Պետք է նշել, որ միջազգային գործընկերներ գտնելու և միջազգային կապերը զարգացնելու ուղղությամբ քոլեջում աշխատանքներ դեռևս չեն իրականցվել, որը պայմանավորված է աշխատակիցների օտար լեզուների (մասնավորապես անգլերենի) ոչ բավարար իմացությամբ:

Վերջին ժամանակահատվածում քոլեջի աշխատակիցները մասնակցել են նաև «Erasmus+» ծրագրի վերապատրաստումներին, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ միջազգայնացման գործընթացները քոլեջի համար դեռևս տեսանելի չեն: Պետք է նշել, որ վերջին երկու տարիներին արտաքին համագործակցության արդյունքում քոլեջում տեղի են ունեցել վերանորոգման, կրթական ծրագրերի իրականացման համար ռեսուրսային բազաների բարելավման աշխատանքներ: Գործատուները և սոցիալական գործընկերները ներգրավված են նաև քոլեջի կառավարման խորհրդում, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ նրանց աջակցությամբ մշակվել է քոլեջի ջեռուցման նախագիծ, որի հիման վրա կազմվող նախահաշիվը քոլեջը ներկայացնելու է ՀՀ ԿԳՄՍ նախարարություն՝ ակնկալելով ֆինանսական աջակցություն:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը ոչ ֆորմալ ձևով համագործակցում է նաև մյուս միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ, որն արտահայտվում է տնօրենների միջև եղած հանդիպումներով և հեռախոսազանգերով կապված օրենսդրական փոփոխությունների և այլնի հետ, համագործակցությունները դեռևս չեն դարձել ՄԿԾ-ների համեմատական վերլուծության, դասախոսների փորձի փոխանակման մեխանիզմներ:

Համաձայն ինքնավերլուծության տվյալների՝ քոլեջի աշխատակիցների 80-90%-ը տիրապետում են օտար լեզուների, իսկ ուսանողների միջինում՝ 60%-ը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ տվյալները ներկայացվել են բանավոր հարցումների հիման վրա: Ներքին շահակիցների հետ հանդիպումները ակնառու դարձրին այն փաստը, որ քոլեջում առկա է օտար լեզվի իմացության (մասնավորապես անգլերենի) խնդիր:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում վերջին տարիներին քոլեջի իրականացրած աշխատանքները սոցիալական գործընկերության զարգացման գործում, տեսանելի է այն առաջընթացը, որ քոլեջը կարողացել է գրանցել սոցիալական գործընկերության շնորհիվ:

Փորձագիտական խումբը կարևորում է քոլեջի տնօրենի նախաձեռնողականությունը տարբեր գործընկեր կառույցների հետ արտաքին համագործակցության հաստատման հարցում, որը կարող է նպաստել արտաքին կապերի ամրապնդմանը և ուսանողների համար գործնական միջավայրի ընդլայնմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը նախաձեռնողականություն դրսևորելու պարագայում կարող է գտնել նաև միջազգային գործընկերներ, որը կնպաստի ուսանողների և դասախոսների փորձի փոխանակմանը և հավելյալ ռեսուրսների ներգրավմանը:

Դրական է համարվում այն, որ ՄՈՒՀ-ն ակտիվ համագործակցություն է ծավալում տարածաշրջանի գործատուների հետ, որը հնարավորություն է տալիս քոլեջի ուսանողներին մասնակցել պրակտիկաների, իսկ հետագայում նաև ընդունվել աշխատանքի, ընդհանուր առմամբ գործատուների հետ կապը նպաստում է ուսանողների կարիերայի զարգացմանը: Ինչ վերաբերում է օտար լեզուների իմացությանը, ապա քոլեջում ռուսերեն լեզվի իմացության մակարդակը բարձր է դասախոսական և վարչական կազմի մոտ, միևնույն ժամանակ անգլերեն լեզվի իմացությունը զարգացման կարիք ունի, փորձագիտական խումբը գտնում է, որ

միջազգայնացման գործընթացները քոլեջը կարող է մեկնարկել ռուսալեզու կրթական տարածքների հետ համագործակցությունից՝ զուգահեռ ապահովելով նաև անգլերեն լեզվի իմացության զարգացումը դասախոսական, ուսանողական և վարչական կազմերի մոտ։

Դրական է, որ քոլեջը հետաքրքրված է միջազգային ծրագրերի մասնակցության հարցում, այնուամենայնիվ դեռևս շոշափելի արդյունքներ նկատելի չեն, այս ուղղությամբ անհրաժեշտ են առավել պլանավորված և ուղղորդված քայլեր։ Գործընկերներ գտնելու, նրանց հետ կապ հաստատելու և հաղորդակցություն սկսելու համար քոլեջի համար կրկին կարևորվում է օտար լեզվի իմացությունը։

Դրական է, որ քոլեջի տնօրենը համագործակցում է այլ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ, այնուամենայնիվ առկա չեն նրանց միջև պայմանագրեր, որը կնպաստի դասախոսների փորձի փոխանակմանը, կրթական ծրագրերի վերաբերյալ արտաքին կարծիքի ստացմանը։

Եզրահանգում։ Հաշվի առնելով, որ ԱՊՔ-ն տարածաշրջանում ունի ակտիվ համագործակցություն գործատուների հետ, որը նպաստել է ԱՀՈՒ կրթական ծրագրի ներդրմանը, ուսանողների պրակտիկաների կազմակերպմանը, վերջին տարիներին ակտիվացել է կապը ՀԿ-ների հետ, որի արդյունքում բարելավվել է քոլեջի ռեսուրսային բազան և ուսումնական միջավայրը, ինչպես նաև կազմակերպվել են կարճաժամկետ ծրագրեր, փորձագիտական խումբը գտնում է, որ Արթիկի պետական քոլեջը բավարարում է չափանիշ 9-ի պահանջները։

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Արթիկի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր: Որակի ապահովման գործընթացները քոլեջի ԶԾ առաջնահերթություններից է, որն իրագործելու համար սահմանվել են հետևյալ քայլերը՝ մշակել Քոլեջի որակի ներքին ապահովման համակարգի ձևավորման հայեցակարգն ու կազմակերպական սխեման՝ գործառույթների հստակ տարանջատմամբ և համապատասխան ընթացակարգերի սահմանմամբ, որակի ապահովման գործընթացները կազմակերպելու համար ներգրավել համապատասխան մասնագետի, որակի ներքին ապահովման շրջանակներում

նախապատրաստել և իրականացնել քոլեջի ստորաբաժանումների գործունեության վերլուծություն, ապահովել որակի գնահատման գործընթացների թափանցիկությունը և ընթացիկ արդյունքների հրապարակայնությունը: Պետք է նշել, որ ներկայացված քայլերում անդրադարձ արված չէ արժանահավատ տվյալների հավաքագրմանը և վերլուծմանը:

2021թ.-ին մշակվել է կրթության որակի պատասխանատուի պաշտոնի նկարագիրը, իսկ 2022թ. օգոստոսին հաստատվել է «Ուսանողի կողմից դասախոսական անձնակազմի և դասավանդման որակի արդյունավետության գնահատման» կանոնակարգը, որի նպատակն է ստանալ տեղեկատվություն քոլեջի դասախոսական անձնակազմի և դասավանդման որակի արդյունավետության վերաբերյալ, վերջինս դեռևս իր լիարժեք կիրառությունը չի գտել:

2023թ.-ի փետրվարին մշակվել է «Որակի ներքին ապահովման քաղաքականություն» փաստաթուղթը, որտեղ ներկայացվում են համակարգի նպատակները և խնդիրները, բոլոր գործընթացների հիմքում ՊԻԳԲ շրջափուլի ներդրումը և այլն: Պետք է փաստել, որ քոլեջում իրականցվող գործընթացները դեռևս պլանավորման և իրականացման փուլում են, իսկ գնահատման գործիքները հաճախ բացակայում են: Քոլեջը մշակել է նաև «Որակի ներքին ապահովման կանոնակարգը», որտեղ հիմնականում ներկայացված են որակի ապահովման կենտրոնի, ղեկավարի և կենտրոնի շրջանակում գործող աշխատանքային խմբի/երի գործառույթները: Պետք է նշել, որ այս ժամանակահատվածում որակի ապահովման աշխատանքները հիմնականում սահմանափակվել են ինքնավերլուծության իրականացմամբ:

Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը որակի ապահովման պատասխանատուի հաստիքը ներդրել է 2021 թվականից, ստեղծել է նաև որակի ներքին ապահովման հանձնաժողով, որն ի պաշտոնե ղեկավարվել է որակի պատասխանատուի կողմից: Ըստ շահակիցների՝ այս շրջանում իրականացվել են ֆոկուս խմբեր, հարցումներ ներքին շահակիցների հետ՝ նրանց կարիքները բացահայտելու նպատակով: 2022թ. Որակի պատասխանատուն, դիմումի համաձայն, հեռացել է նշանակված հաստիքից: Իրականացված հարցումների և ֆոկուս խմբերի արդյունքները հիմք չեն ծառայել քննարկումների համար, համապատասխանաբար նաև չեն կիրառվել որոշումների կայացման գործում, իսկ հետագայում չեն փոխանցվել հաջորդ որակի ներքին ապահովման պատասխանատուին:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացների աշխատանքները կազմակերպելու նպատակով 2023 թ. փետրվարի 1-ին նշանակվել է որակի ներքին ապահովման նոր պատասխանատու, հետագայում ձևավորվել է նաև որակի ապահովման աշխատանքային խումբ: Խմբի կազմում ներառված են տնօրենը, տնօրենի երկու տեղակալները, կարիերայի պատասխանատուն, ամբիոնի վարիչը, երկու դասախոսներ, ՈԻԽ նախագահը, ինչպես նաև տարբեր ՄԿԾ-ներից 8 ուսանող: Աշխատանքային խումբը գործում է հասարակական հիմունքներով: Ինքնավերլուծությանը նախապատրաստվելու համար աշխատանքային խումբը մասնակցել է ՈԱԱԿ-ի կողմից անցկացված աշխատաժողովներին, իսկ որակի պատասխանատուն՝ ՈԱԱԿ-ի կողմից կազմակերպված փորձագետների վերապատրաստմանը:

Պետք է նշել, որ որակի ներքին ապահովման պատասխանատուի և աշխատանքային խմբի աշխատանքները հիմնականում սահմանափակվում են ինքնավերլուծության

իրականացմամբ և ուսանողների շրջանում դասախոսական անձնակազմի և դասավանդման որակի արդյունավետության գնահատման հարցումների իրականացմամբ: Վերջինիս արդյունքները դեռևս չեն վերլուծվել և չեն քննարկվել:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից և փորձագիտական այցից պարզ դարձավ, որ բացակայում է որակի ներքին ապահովման կենտրոնի աշխատանքային պլանը, հետագա աշխատանքները դեռևս պլանավորված չեն, հստակ չէ նաև որակի ապահովման աշխատանքների զարգացման ուղղությամբ քոլեջի տեսլականը: Ռեսուրսների դիտարկումից պարզ դարձավ, որ որակի ներքին ապահովման պատասխանատուի համար առկա է առանձնացված աշխատասենյակ՝ համապատասխան անհրաժեշտ ռեսուրսներով և կահավորանքով, ըստ շահակիցների, այլ ֆինանսական ռեսուրսների անհրաժեշտություն դեռևս չի նկատվել: Միևնույն ժամանակ պետք է նշել, որ որակի ապահովման պատասխանատուն նաև ամբիոնի վարիչ է, որի ենթակայության տակ գործում է չորս կրթական ծրագիր:

Արտաքին շահակիցների հետ համագործակցություններ առկա են հիմնականում ամբիոնների մակարդակում, որոնք համակարգային և պարբերական չեն, մյուս կողմից բացակայում են որակի ապահովման համակարգում նրանց ներգրավելու մեխանիզմները:

Քոլեջի որակի ներքին ապահովման համակարգը գտնվում է ներդրման փուլում, դեռևս համակարգի արդյունավետության գնահատման, ըստ այդմ էլ համակարգի վերանայումներ տեղի չեն ունեցել:

Ինքնավերլուծության իրականացման ընթացքում քոլեջը բացահայտել է, որ մի շարք գործընթացների վերաբերյալ տվյալները բացակայել են, օրինակ՝ ուսանողական և դասախոսական համակազմերի օտար լեզվի իմացության վերաբերյալ քանակական տվյալներ, ռեսուրսների օգտագործման արդյունավետության վերաբերյալ տվյալներ և այլն: Բացը լրացնելու համար իրականացվել են բանավոր հարցումներ, հավաստի տվյալների հավաքագրում և վերլուծություն տեղի չի ունեցել:

Քոլեջն իր ԶԾ-ում կարևորել է որակի գնահատման գործընթացների թափանցիկությունը և ընթացիկ արդյունքների հրապարակայնությունը: Պետք է նշել, որ քոլեջի կայքէջում ինքնավերլուծությունը հրապարակված չէ, ինչպես նաև առանձնացված չէ որակի ապահովման բաժին: Կայքէջի «Փաստաթղթեր» բաժնում միայն ներկայացված են Որակի ապահովման կենտրոնի քաղաքականությունը, և որակի ապահովման գործընթացները ապահովող երկու այլ կանոնակարգեր:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ որակի ապահովման գործընթացները քոլեջի առաջնահերթություններից են, իսկ համակարգը ներդնելու նպատակով ձևավորվել է փաստաթղթային հենք: Այս փուլում քոլեջի համար առանցքային է որակի ապահովման գործընթացների ճիշտ պլանավորումը և համապատասխան գործիքակազմի մշակումը: Չնայած նրան, որ առկա է փաստաթղթային հենք, այնուամենայնիվ դեռևս ապահովված չէ այնտեղ ներկայացված բովանդակության տեղայնացումը: Մտահոգիչ է, որ նոր ձևավորված որակի ապահովման կենտրոնը չունի համապատասխան տեսլական, ինչպես նաև ապագայում պլանավորված գործընթացներ, վերջիններիս բացակայությունը կարող է

վտանգել համակարգի կայացումը: Այս համատեքստում . փորձագիտական խումբը կարևորում է որակի ապահովման աշխատանքներն իրականացնող մասնագետի մասնագիտական աճը այս ոլորտում:

Փորձագիտական խմբի համար անհանգստացնող է նաև այն, որ որակի ապահովման պատասխանատուների փոփոխությունը հանգեցնում է նրան, որ հաջորդ մասնագետը բոլոր գործընթացները սկսում է սկզբից, նախորդից հաջորդին ժառանգման գործընթացներ տեղի չեն ունենում, սա կարող է հանգեցնել քոլեջում որակի ապահովման մշակույթի չձևավորմանը:

Չնայած նրան, որ ՊԻԳԲ շրջափուլի իրականացումը սահմանված է Որակի ապահովման քաղաքականությամբ, այնուամենայնիվ շրջափուլը դեռևս լիարժեք չի գործում, գնահատման գործընթացներ իրականացնելու համար մշակված չէ նաև համապատասխան գործիքակազմ: ԱՊՔ-ի համար այս պահին անհրաժեշտություն է տվյալների հավաքագրման մեխանիզմների ներդրումը, որը հնարավորություն կընձեռի կուտակելու օբյեկտիվ տեղեկատվություն քոլեջում տեղի ունեցող գործընթացների արդյունավետության վերաբերյալ, որոնք հիմք կծառայեն նաև տվյալահենք որոշումների կայացմանը: Փորձագիտական խումբը այս ուղղությամբ նշում է, որ նախքան տվյալների հավաքագրման աշխատանքները սկսելը, քոլեջն իր համար պետք է հստակեցնի, թե որ ուղղություններն են այս պահին առաջնահերթ և ինչպիսի տվյալների կարիք ունեն իրենք, միայն հստակ պլանավորման պարագայում հնարավոր կդառնա կիրառական և արժեքավոր տվյալների դուրսբերումը: Փորձագիտական խումբը անհանգստացնող է համարում այն, որ Որակի ապահովման պատասխանատուն զբաղեցնում է ամբիոնի վարիչի պաշտոնը, որն իրենից ենթադրում է մեկ այլ մեծ ծավալի պատասխանատվություն և ծանրաբեռնվածություն, արդյունքում կարող են տուժել որակի ապահովման գործընթացները: Փորձագիտական խումբը կարևորում է նաև արտաքին և ներքին շահակիցների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում, որը կարող է նպաստել կրթական ծրագրերի շարունակական բարելավմանը, արտաքին կապերի զարգացմանը և որակի մշակույթի արմատավորմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ԱՊՔ-ում որակի ապահովման համակարգը կայացած չէ, որակի ապահովման աշխատանքները հիմնականում սահմանափակվել են ինքնավերլուծության իրականացմամբ, առկա չէ օբյեկտիվ տվյալների հավաքագրման գործիքակազմ, ըստ այդմ որոշումների կայացումը չի հիմնվում վերլուծված տվյալների վրա, քոլեջի գործունեության հիմքում դրված չէ որակի ապահովման ՊԻԳԲ շրջափուլը, ներքին և արտաքին շահակիցները ամբողջությամբ ներգրավված չեն ՈԱ գործընթացներում, փորձագիտական խումբը գտնում է, որ ԱՊՔ-ն չի բավարարում չափանիշ 10-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՀՀ ԿԳՄՄՆ Արթիկի պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Չի բավարարում
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Ասյա Սիմոնյան
Փորձագիտական խմբի ղեկավար

03.08.2023թ.

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Ասյա Սիմոնյան՝ 2013թ-ին ավարտել է Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի «ֆիզիկական կուլտուրա և սպորտ» մասնագիտության մագիստրոսական ծրագիրը: 2017թ.-ին ավարտել է ՇՊՀ «Դասավանդման և դաստիարակության մեթոդիա (ֆիզիկական կուլտուրա)» մասնագիտության ասպիրանտուրան: Մանկավարժական գիտությունների թեկնածու է: 2005-2007թթ. աշխատել է «Գյումրու մարմանամարզիկ» ՓԲԸ-ում՝ որպես գեղարվեստական մարմնամարզության մարզիչ, 2007-ից աշխատում է Գյումրու մարզական բարձրագույն վարպետության դպրոցում, որպես մարզիչ-մանկավարժ, 2013-ից մինչ օրս աշխատում է Շիրակի պետական համալսարանում՝ ներկայումս Սպորտի և արվեստի ամբիոնի ասիստենտ է: 2017 թվականից հանդիսանում է գեղարվեստական մարմնամարզության անհատական և խմբակային ձևերի միջազգային կարգի մրցավար: 2021թ-ից անդամակցում է ՀՀ մարմնամարզության ֆեդերացիայի գեղարվեստական մարմնամարզության մրցավարական խորհրդին: Հրատարակել է 13 գիտական հոդվածներ հանրապետական և միջազգային նշանակության պարբերականներում:

2004թ. -ին ստացել է ՀՀ գեղարվեստական մարմնամարզության սպորտի վարպետի կոչում: Գեղարվեստական մարմնամարզության հանրապետական և միջազգային առաջնությունների բազմակի հաղթող և մրցանակակիր է: 2008թ. Աշխարհի գավաթի, 2010թ. Աշխարհի առաջնության և 2012թ. Աշխարհի ակումբային առաջնության մասնակից է: 2013թ. -ին Մագիստրոսի կրթական ծրագրով ճանաչվել է հանրապետական «Լավագույն ուսանող» մրցույթի մրցանակակիր (սպորտի ոլորտում): 2015թ. ստացել է «Պատվոգիր» ՀԱՕԿ-ի կողմից՝ ֆիզկուլտուրայի և սպորտի բնագավառում ունեցած մեծ ավանդի, գեղարվեստական մարմնամարզությունը և օլիմպիական գաղափարախոսությունը մասսայականացնելու համար:

Մարինե Գալուբյան՝ 2004-2008թթ սովորել է Երևանի պետական տնտեսագիտական համալսարանում՝ մաքսային գործ կրթական ծրագրով: 2010թ-ին ավարտել է Գիտությունների ազգային ակադեմիայի ֆինանսներ մագիստրոսական ծրագիրը: Աշխատում է Սանարե-ֆարմ ՍՊԸ-ում՝ որպես հաշվապահ: 2021թ-ից Արտաշատի №3 հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի անդամ է, 2020-2022թթ. զբաղեցրել է Արարատի տարածաշրջանային պետական քոլեջի Կրթության որակի պատասխանատուի հաստիքը: 2013-2020թթ-ին աշխատել է նույն քոլեջում՝ որպես Սոցիալ-տնտեսագիտական և հաշվապահական հաշվառման ամբիոնի դասախոս:

Օլյա Ավետիսյան՝ 2012 - 2016թթ.-ին սովորել է Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջում՝ Հագուստի մոդելավում և նախագծում մասնագիությամբ, 2016-2019-ին սովորել է Խաչատուր Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանի Գեղարվեստական կրթության ֆակուլտետում: Մագիստրոսական կրթություն է ստացել նույն համալսարանի «Հոգեբանություն» կրթական ծրագրում: Աշխատել է «Ալեքս Տեքստիլ» ՓԲԸ-ում որպես կոնստրուկտոր, ինչպես նաև «ԳՈԼԴ ՍՍԱՄ» ընկերությունում՝ 3D մոդելավորող: 2018թ-ից մինչ օրս աշխատում է Երևանի թեթև արդյունաբերության պետական քոլեջում մասնագիտական առարկաների ամբիոնի դասախոս է:

Ռոբերտ Գրիգորյան՝ 2021թ.-ից սովորում է Հայաստանում ֆինանսական քոլեջի ծրագրավորում մասնագիտության 3-րդ կուրսում: 2023թ.-ին մասնակցել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող-փորձագետների պատրաստման դասընթացին:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

	22.05.2023թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում քոլեջի տնօրենի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում քոլեջի տնօրենի տեղակալների հետ	10:40	11:40	60 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն կատարած խմբի հետ	11:50	12:40	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:50	13:50	60 րոպե
5.	Հանդիպում քոլեջի կառավարման խորհրդի անդամներ հետ	14:00	15:00	60 րոպե
6.	Հանդիպում գործատուների հետ	15:10	16:10	60 րոպե
7.	Հանդիպում քոլեջի շրջանավարտների հետ	16:20	17:20	60 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտականխմբի փակհանդիպում	17:30	19:00	90 րոպե

	23.05.2023թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ամբիոնների վարիչների և ուսումնական մասի վարիչի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Դասալսումներ	10:55	12:00	60 րոպե
3.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչներիհետ (ներառյալ 3 ՄԿԾ-ները)	12:10	13:10	60 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:20	14:20	60 րոպե
5.	Հանդիպում ուսանողների հետ (10-12 հոգի)	14:30	15:30	60 րոպե
6.	Հանդիպում հաստատության ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ (կարերայի պատասխանատու, պրակտիկայի բաժնի վարիչ, գրադարանավար, հաշվապահ, կադրերի բաժնի վարիչ, գնումների համակարգող, արխիվավար)	15:40	16:40	60 րոպե
7.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտականխմբի փակհանդիպում	16:50	18:30	100 րոպե

	24.05.2023թ.			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա», «Հաշվապահական հաշվառում», «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» կրթական ծրագրերի պատասխանատուների հետ			09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» կրթական ծրագրի դասախոսների հետ	Հանդիպում «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագրի դասախոսների հետ	Հանդիպում «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» կրթական ծրագրի դասախոսների հետ	10:40	11:30	50 րոպե
3.	Հանդիպում «Հագուստի պատրաստման տեխնոլոգիա» կրթական ծրագրի ուսանողների հետ (10-12 հոգի)	Հանդիպում «Հաշվապահական հաշվառում» կրթական ծրագրի ուսանողների հետ (10-12 հոգի)	Հանդիպում «Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» կրթական ծրագրի ուսանողների հետ (10-12 հոգի)	11:40	12:30	50 րոպե
4.	«Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» և «Հաշվապահական հաշվառում» ՄԿԾ-ների արտադրական պրակտիկաների դիտարկում			12:40	13:30	50 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:45	14:45	60 րոպե
6.	Հանդիպում ՈՒԽ ներկայացուցիչների հետ			14:55	15:35	40 րոպե
7.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ			15:45	16:15	30 րոպե
8.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում			16:25	18:30	125 րոպե

	25.05.2023թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում որակի ապահովման պատասխանատուի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	10:40	11:30	50 րոպե
3.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	11:40	12:30	50 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	12:40	13:40	60 րոպե
5.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	13:50	17:00	190 րոպե
6.	Հանդիպում ՄՈՒՀ-ի ղեկավար կազմի հետ	17:00	17:20	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	Ռազմավարական ծրագրի իրականացման պլան-ժամանակացույց	1
2.	Կառավարման, տնօրինական, մանկավարժական և ուսումնամեթոդական խորհուրդների նիստերի արձանագրությունների օրինակներ	2
3.	Նախահաշիվներ /վերջին 3 տարիների համար/	2
4.	Տնօրենի տարեկան հաշվետվություններ /վերջին 3 տարիների/	2
5.	Դասացուցակներ	3
6.	Կրթական ծրագրերի ամբողջական փաթեթներ	3
7.	Կրթական ծրագրերի շրջանակներում տրվող առաջադրանքներ, ուսումնառության նյութեր	3
8.	Պետական ամփոփիչ քննությունների հանձնաժողովների նախագահների հաշվետվություններ	3
9.	Պետական ամփոփիչ քննությունների հարցատոմսեր	3
10.	Պրակտիկայի օրագրեր, ամփոփաթերթեր, ղեկավարների առաջարկություններ /երեք կրթական ծրագրերի, վերջին 3 տարիների/	3
11.	Դասամատյաններ, պրակտիկաների մատյաններ	3
12.	«Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» ՄԿԾ-ի դիպլոմ	3
13.	«Ֆիզիկական կուլտուրա և սպորտ» ՄԿԾ-ի հետ առնչվող հրամաններ	3
14.	Դիմորդներին տրվող տեղեկատվական թերթիկներ	4
15.	Ընդունելության արձանագրություններ, Գրանցամատյաններ/փաստաթուղթ, որտեղ արտացոլված է դիմորդների քանակը և ընդունվողների քանակը, նրանց առաջադիմությունը/	4
16.	Տնօրենի հրաման՝ կապված դիմորդների հավաքագրման նպատակով ուսումնական հաստատություններ կատարված այցերի վերաբերյալ	4
17.	Խորհրդատվությունների ժամանակացույցեր	4
18.	Շրջանավարտների բազա /վերջին 5 տարիների/	4
19.	Դասախոսի իրավունքներն ու պարտականությունները	5
20.	Դասախոսի ընդունելության բանավոր մրցույթի հարցաշարեր, հարցատոմսեր, մրցույթի արձանագրություններ	5
21.	Դասալսումների արձանագրություններ	5
22.	Դասախոսների մոտ եղած դասալսումների արձանագրություններ /տրամադրել նաև այն դասախոսներինը, որոնց մոտ պլանավորված են դասալսումներ/	5
23.	Դասախոսների մեթոդական զեկուցումների օրինակներ	5

24.	Դասախոսների թեմատիկ պլաններ	5
25.	Ուսանողներին տրվող կուրսային, անհատական, վերլուծական և դիպլոմային աշխատանքներ	6
26.	Գնումների փաստաթուղթ	7
27.	Ֆինանսական հաշվետվություններ	7
28.	Հաստիքացուցակ՝ նշված աշխատավարձերով	7
29.	Քոլեջի կողմից տրամադրված որակական և քանակական տեղեկատվության հրապարակումների արդյունավետությունը արտացոլող վերլուծություն / հաշվետվություն/	8
30.	Ստորաբաժանումների տարեկան և կիսամյակային հաշվետվություններ	8
31.	ՈԱ պատասխանատուի պաշտոնի նկարագիրը	10
32.	ՈԱ աշխատաների պլաններ	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ,
2. Մարզադահլիճ,
3. Դահլիճ,
4. Մասնագիտական կաբինետներ,
5. Լաբորատորիաններ,
6. Բուժկետ:

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1.	ՄՈՒՀ	Մասնագիտական ուսումնական հաստատության
2.	ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
3.	ԿԳՄՄՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
4.	ՈԱՇ	Որակավորումների ազգային շրջանակ
5.	ԶԾ	Զարգացման ծրագիր
6.	ՄԿԾ	Մասնագիտական կրթական ծրագիր
7.	ԱՊՔ	Արթիկի պետական քոլեջ
8.	ՊԿՉ	Պետական կրթական չափորոշիչ
9.	ՀԾ	Հաշվապահական ծրագիր
10.	ԱՀՈՒ	Աշխատանքի վրա հիմնված ուսուցում
11.	ՄԿՈՒԶԱԿ	Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգայի կենտրոն
12.	ՎԷՎ	Վակուումային էլեկտրավառարանների գործարան
13.	ՈՒԽ	Ուսանողական խորհուրդ
14.	ՊԴ	Պրոֆեսորադասախոսական
15.	ՈՒՕ	Ուսումնաօժանդակ
16.	ՀԿ	Հասարակական կազմակերպություն
17.	ՈՆԱԿ	Որակի ներքին ապահովման կենտրոն
18.	ՈԱԱԿ	Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամ